

Դաշնակցությունը պիտի չմասնակցի Երեւանի Աւագանիի ընտրություններուն

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Երեւանի քաղաքային կոմիտէն 8 ապրիլին հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշեց, թէ վերլուծելով Հայաստանի Ազգային ժողովի ընտրութիւններուն Երեւանի մէջ Դաշնակցութեան ձեռք բերած անսպասելիօրէն ցած արդիւնքները, խորհրդակցելով Երեւանի վարչական շրջաններու կոմիտէներուն հետ, ՀՅԴ Երեւանի քաղաքային կոմիտէն նպատակադրեց չի գտներ մայրաքաղաքի աւագանիի ընտրութիւններուն մասնակցելը:

«Այս փուլին մեր առաջնահերթ հարցը կը նկատենք 2 ապրիլի ընտրութիւններուն մեր կառույցին արձանագրած արդիւնքին պատճառներուն ուսումնասիրութիւնը եւ անհրաժեշտ եզրակացութիւններու յանգիլը:

«Յոյսով ենք, որ գիտակցուած քուէով Երեւանի աւագանի ձեւաւորելու պատրաստ մեր համաքաղաքացիները ըմբռնումով կ'ընդունին այս որոշումը: Միաժամանակ կը պարտաւորուինք ուշադրութեամբ հետեւիլ Երեւանի բոլոր հիմնախնդիրներուն եւ մեր կարելիութեան սահմաններուն մէջ մասնակից դառնալ անոնց լուծման», նշուած է հաղորդագրութեան մէջ:

Փայլան հետաքրքրուած է Թուքիոյ Արտաքին գործոց նախարարութեան արխիւի ճակատագիրով

Քրտամէտ ընդդիմադիր ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութեան Հայ երեսփոխան Կարօ Փայլան Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլուին ուղղուած գրաւոր հարցումով հետաքրքրուած է արտաքին գործոց նախարարութեան արխիւներու ճակատագիրով:

Հայ երեսփոխանը նաեւ փորձած է պարզել, թէ արդեօք այդ արխիւներուն մէջ կա՞ն Հայոց ցեղասպանութեան ժամանակաշրջանը ընդգրկող (մինչեւ 1919-ը) փաստաթուղթեր, որոնք տեղ չեն գտած կառավարութեան օսմանեան արխիւին մէջ:

Անոր համաձայն, թէեւ կը նշուի, որ այդ արխիւը կը սկսի 1919-էն, որոշ պաշտօնեաներ կը յայտնեն, որ արխիւին մէջ կան նաեւ փաստաթուղթեր, որոնք կը վերաբերին մինչեւ 1919 հասնող ժամանակաշրջանին:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմնի յայտարարությունը

Ապրիլի 2-ին կայացած Ազգային ժողովի ընտրութիւնները խորհրդարանական եւ ընտրական համակարգերի առաջին փորձութիւնն էին՝ քաղաքական նոր մշակոյթ ձեւաւորելու, նոր սկիզբ դնելու առաջադրանքով:

Մեկնելով նախընտրական շրջանի, ընտրութեան օրուայ եւ արդիւնքների վերլուծութիւնից՝ ՀՅ Դաշնակցութեան Հայաստանի Գերագոյն մարմինը արձանագրում է.

ա. Քաղաքական համակարգի կայացման առումով դնահատելի էր դերակատար ուժերի ազատ մրցակցութիւնը եւ հիմնականում քաղաքակիրթ ընտրապայքարը:

բ. Յատուկ քննութեան կարիք ունի ընտրողների անսպասելի բարձր մասնակցութիւնը, ինչը մի կողմից քաղաքացիական աշխուժութեան դնահատելի դրսեւորում էր, միւս կողմից՝ ֆինանսական ու վարչական միջոցների օգտագործման արատաւոր երեւոյթի հետեւանք:

գ. Փաստ է, որ ընկերային դժուար կացութեան մէջ յայտնուած հասարակութեան զգալի մասը, որը չունի անհրաժեշտ քաղաքացիական աշխուժ դիրքորոշում, դեռեւս ի վիճակի չէ ազատ ու գիտակցուած ընտրութիւն կատարել: Հանրութեան քաղաքական, հոգեւոր-մշակութային արժեհամակարգի արմատական փոփոխութիւնը կուսակցութիւնների, քաղաքացիական հասարակութեան, ազգային-պետական ընտրախաւի լրջագոյն մարտահրաւէրն է:

դ. Տեղի է ունեցել քաղաքական դաշտի բիւրեղացում. բացայայտ ամբոխավարական եւ պարտուողական գաղափարները չընդունուեցին մեր հանրութեան կողմից:

է. Գնահատելի է, որ իրենց մասնագիտական պարտականութիւնները եւ քաղաքացիական պարտքը կատարեցին լրատուամիջոցներն ու իրապէս անկախ դիտորդական կազմակերպութիւնները:

զ. Նոր Ազգային ժողովում ՀՅ Դաշնակցութեան դերակատարութեան ձեւաչափը թողնելով առաջիկայ օրերի քննարկումներին՝ մենք շնորհակալութիւն ենք յայտնում գիտակից քուէարկութիւն կատարած իւրաքանչիւր քաղաքացու, ինչպէս նաեւ մեր շուրջ համախմբուած ընտրապայքարի բոլոր մասնակիցներին:

է. Այս ընտրութիւններում ՀՅ Դաշնակցութեան արձանագրած նկատելի առաջընթացը պարտաւորեցնող է: Մենք շարունակելու ենք հետեւողականօրէն իրագործել մեր գաղափարներն ու ծրագրերը՝ հաւատարիմ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներին տրուած՝ նոր սկիզբ դնելու, ազատ, արդար, խաղաղ, բարեկեցիկ Հայաստան ունենալու խոստմանը:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 24 ԱՊՐԻԼ 2017

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԵ ՕԹԹԱՈՒԱՅԻ ՄԷՋ

ՄԵԿՆՈՒՄ ՀԱՅ ԿԵԴՐՈՆՆԵՐԷՆ
ՄՈՆԹՐԵԱՆ ԵՒ ԼԱՒԱԼ առաւօտեան ժամը 9:00-ին
ԹՈՐՈՆՏՕ առաւօտեան ժամը 6:00-ին
ԳԷՄՊՐԻՃ առաւօտեան ժամը 5:30-ին



2017

HR-V

STARTING FROM

\$20,950*



HONDA
GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
www.hondagabriel.com
◀ OPEN SATURDAYS ▶

HONDA

Kevork Asadourian
Vahan Vartanian

*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.

فصحى جديده Joyeuses Pâques



Suivez-nous !



www.groupeadonis.ca



MARCHÉ

ADONIS

Ի՞նչ կը փնտռէ Ատրպէյճանը Սէուտական Արաբիոյ մէջ

Ատրպէյճանի Պաշտպանութեան նախարար Զաքիր Հասանովը Սէուտական Արաբիա կատարած պաշտօնական այցին ընթացքին հանդիպած է միապետութեան գահաժառանգ, փոխվարչապետ եւ Պաշտպանութեան նախարար Մուհամետ Պըն Սալման Ալ Սէուտիի հետ: Կողմերը քննարկած են երկու երկիրներուն միջեւ ռազմական եւ ռազմատեխնիկական համագործակցութեան խորացման առնչուող հարցեր: Ատրպէյճանական լրատուամիջոցները կը յայտնեն, որ կը նախատեսուի նաեւ Հասանովի հանդիպումը Սէուտական Արաբիոյ թագաւոր Սալման Պըն Ապտուլազիզ Ալ Սէուտիի հետ:

Սէուտական միապետութեան եւ Ատրպէյճանի յարաբերութիւնները սկսած են Ատրպէյճանի անկախացումը. Սէուտական Արաբիան առաջիններէն էր, որ ճանչցաւ Ատրպէյճանի անկախութիւնը, եւ երկու երկիրները համապատասխանաբար ղեկավարողներ ունին

Պաքուի եւ էլ-Ռիյատի մէջ: Մինչեւ վերջին տարիները երկու երկիրներուն յարաբերութիւնները ակնբախ էին իրենց «ջերմութեամբ», թէեւ ընդհանուր առմամբ բնականոն բնոյթ կը կրէին: Իսկ վերջին շրջանին երկու երկիրներուն յարաբերութիւններուն առնչութեամբ էական առաջընթաց գրանցուած է: Ընդհանուր առմամբ, շեշտը դրուած է առեւտրատնտեսական յարաբերութիւններու զարգացման վրայ: Աւելին, ինչպէս ատրպէյճանցի վերլուծաբանները յաճախ կը սիրեն յիշեցնել, «Սէուտական Արաբիան Ատրպէյճանը կը համարէ իր հիմնական գործընկերը տարածաշրջանին մէջ»:

Ոմանք ատրպէյճանա-սէուտական յարաբերութիւններու խորացումը կը բացատրեն իսլամական աշխարհի առաջատար դիրքերու համար պայքարի ծիրէն ներս շիական Իրանի եւ սուննիական Սէուտական Արաբիոյ վաղեմի մրցակցութեամբ, ինչ որ կը դրդէ միապետութիւնը՝ աւելի խորացնելու իր յարաբե-

րութիւնները Ատրպէյճանի հետ՝ փորձելով հակազդել իրանական ջանքերուն եւ կանխել շիական ճամբարին մէջ Ատրպէյճանի աքթիւացումը, ինչպէս նաեւ հաշուի առնելով այն հանգամանքը, որ Ատրպէյճանը «ռեսուրսային» երկիր կը համարուի:

Այս տեսակէտը, անշուշտ, աւելի քան տրամաբանական եւ ընդունելի է, բայց ոչ ամբողջական: Վերջին տարիներուն երկու երկիրները զգալի ջանքեր ի գործ դրած են «իսլամական գործօնը» ատրպէյճանա-սէուտական յարաբերութիւններու էական տարր դարձնելու համար: Թերեւս պատահական չէ, որ վերջին տարիներուն անոնց համագործակցութիւնը աւելի ակնյայտ կը դառնայ ռազմական ոլորտին մէջ եւ միջազգային գանազան կազմակերպութիւններու շրջանակներուն մէջ:

Չնայած ատրպէյճանական կողմի պնդումներուն առ այն, որ «Ատրպէյճանը խաղաղասէր երկիր է» եւ «զգալի ջանքեր կը գործադրէ տարածաշրջանին մէջ լարուածութեան թուլացման եւ բարի դրացիական մթնոլորտի հաստատման համար»՝ իրականութեան մէջ Պաքու ամէն կերպ կ'օգտագործէ իսլամական գործօնը իր ռազմական ներուժը ամրապնդելու եւ Ղարաբաղեան հակամարտութեան հարցով «իսլամական միասնութիւն» ձեւաւորելու համար: Հասկնալի է, որ «իսլամական գոր-

ծօնի» առաջ մղման տեսանկիւնէն Պաքուի շահերը աւելի քան կը հակին էլ-Ռիյատի հիմնական քաղաքականութեան հետ, եւ պատահական չէ, որ Ատրպէյճանն ու Սէուտական Արաբիան սերտօրէն կը համագործակցին յատկապէս իսլամական կազմակերպութիւններու շրջանակներուն մէջ:

Հետեւաբար, Ատրպէյճանի Պաշտպանութեան նախարարի՝ էլ-Ռիյատ կատարած այցէն վստահօրէն կարելի է ակնկալել երկու երկիրներուն յարաբերութիւններու խորացում առնուազն երկու ուղղութեամբ՝ ռազմական համագործակցութիւն եւ գործողութիւններու հետագայ համակարգում իսլամական կազմակերպութիւններու շրջանակներուն մէջ:

Այս, ի հարկէ, դեռ չի նշանակեր, թէ սէուտա-ատրպէյճանական գործընկերութեան խորացումը անխոչընդոտ պիտի ընթանայ: Վստահաբար կարելի է պնդել, որ այս յարաբերութիւնները չեն վրիպիր Իրանի ուղադրութենէն, եւ թերեւս պատահական չէ այն հանգամանքը, որ Ատրպէյճանը կը փորձէ նարաւորինս զգոյշ ըլլալ հակաիրանական քայլեր ձեռնարկել:

Արփիմէ Յովսէփեան
Հայեացք վերլուծական կեդրոնի փորձագէտ



Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼՍԻՄԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677



Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամեւօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը՝ / Visit our new website
www.arsarmenianschool.ca



Հայ Օգնութեան Միութեան Օրուան Տօնակատարութիւն

Կազմակերպութեամբ՝ Հ.Օ.Մ.-ի Մոնթրէալի «Սօւէ» եւ Լաւալի «Շուշի» մասնաճիւղերուն

Հովանաւորութեամբ՝
Գերշ. Տէր Բարգէն Արք. Զարեանի
 Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին

Նախագահութեամբ՝
Ընկ. Տիրուկ Մանճիկեանի

Օրուան Պատգամաբեր՝
Ընկ. դոկտ. Վիգէն Թիւֆէնքճեան

Գեղարուեստական Յայտագիր

Կիրակի, 7 Մայիս 2017-ին, կ.ե. ժամը 5:00-ին
 Ս.Յակոբ Վարժարանի «Բաստրմաճեան» սրահէն ներս

Պաշտօնական հանդիսութենէն ետք հիւրասիրութիւն վարժարանիս «Հաճէթեան» մարգարախէն ներս

Մուտքը ազատ



Հայ Օգնութեան Միութեան Մոնթրէալի «Սօւէ» մասնաճիւղի Տարեցներ Այցելող Յանձնախումբի 30-ամեակի տօնակատարութիւն

ԹԷՅԱՍՄԵՂԱՆ

Հովանաւորութեամբ՝
Գերշ. Տ. Բարգէն Արք. Զարեանի
 Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի

Նախագահութեամբ՝
Ընկերուհիներ Արտեմիս Մկրտիչեանի եւ Վանին Գապասազալեանի

Պատգամաբեր՝
Ընկ. Տիրուկ Մանճիկեան
 Գեղարուեստական յայտագիր եւ սահիկներու ներկայացում

Կիրակի, 30 Մարտ 2017-ին, կ.ե. ժամը 5-ին
 Հայ Կեդրոնի «Ա. Ահարոնեան» սրահին մէջ

Մուտքի նուէր 15 տոլար

Արմենակի, Ռոպերթի, Քեարամի ու Անդրանիկի վրեժը լուծած հետախույզը

Արցախի հիւսիսարեւելեան հատուածի N զօրամասի հետախուզութեան պետ, գնդապետ Գարիկ Մնացականեան (անունը փոխուած է-հեղինակ) 2016 թուականի Ապրիլի լոյս 2-ի վաղ առաւօտեան մասնակցել է 116 մարտական դիրքը վերադարձնելուն: Սա այն դիրքն է, որտեղ հերոսի մահով ընկել էին հրամանատար Արմենակ Ուրֆանեանը, Արցախի հերոս Ռոպերթ Ապաճեանը, գնդացրորդներ Քեարամ Սլոյեանը եւ Անդրանիկ Զոհրապեանը:

Մեդիամաքսին տուած հարցազրոյցում հետախույզը պատմել է 2016 թ. Ապրիլի 1-ի լոյս 2-ի գիշերուայ ընթացքում հակառակորդի ձեռնարկած գրոհի եւ դիրքը ետ բերելու գործողութեան մասին:

Ապրիլի լոյս 2-ի գիշերը, նկատելով հակառակորդի աթիւլութիւնը, վերադաս հրամանատարութեան համաձայնութեամբ, իմ ենթակայութեան տակ գտնուող հետախուզական վաշտը բերել եմ մարտական առաջին աստիճանի պատրաստութեան:

Հակառակորդի կողմից ձեռնարկած հրետանային հարուածների եւ մարտական դիրքերից մէկի վրայ ձեռնարկած բացայայտ գրոհի ընթացքում եղել եմ օպերատիւ խմբի աւազ եւ տեղեակ եմ եղել բոլոր միջոցառումներին, մշտական կապի մէջ եմ եղել 116 դիրքում գտնուող հրամանատար Արմենակ Ուրֆանեանի հետ:

Մարտը ղեկավարուել է ըստ անհրաժեշտութեան: Հակառակորդի գրոհը կասեցման համար անհրաժեշտ բոլոր միջոցառումներն իրականցուել են տղաների կողմից: Երկու գրոհ տղաները կասեցրեցին ու ետ մղեցին հակառակորդին, բայց երրորդ փորձի ժամանակ, որը բերեց ուժերի ու տեխնիկայի գերակշիռ ճնշման, զոհուեցին հրամանատար Արմենակ Ուրֆանեանը, Քեարամ Սլոյեանը, տղաներից երեքին յաջողուեց ետ քաշուել ու սպասել թիկունքից օդուութեան եկող խմբին, իսկ Ռոպերթ Ապաճեանն ու Անդրանիկ Զոհրապեանը շարունակեցին մարտը:

Այդ ընթացքում հակառակորդը ներխուժեց մեր դիրք: Ապաճեանն ու Զոհրապեանը վիրաւորուել էին, հասել



էին կացարանի մօտ, վիրաւոր Անդրանիկ Զոհրապեանն արնահոսութիւնից մահացել էր: Քսանապետ Ապաճեանը դիրքաւորուել է մարտական խրամախորշում ու շարունակել կռիւը՝ միաժամանակ հեռախօսային կապի մէջ մնալով գումարտակի հրամանատարի հետ ու հաղորդելով իրավիճակի մասին: Տեսնելով իրեն մօտեցող խմբին՝ Ապաճեանը կրկին կապի է դուրս եկել ու ասել, որ վերջին նռնակի օդակն արդէն հանել ու պատրաստ սպասում է՝ հենց մօտենան, իր հետ միասին պայթեցնելու է նրանց:

Առաւօտեան ժամը 6-ի սահմաններում հրամանատարի կողմից խնդիր եմ ստացել անձամբ լինել այնտեղ: Գործակցելով հրասայլային դասակի հետ՝ զօրամասի հետախուզական վաշտի ստորաբաժանման ուժերով հասել ենք տեղ ու էտիկ Մալոյեանի խմբի հետ դուրս «հրաւիրել» հակառակորդին մեր տարածքից:

Հակառակորդն այդ ընթացքում հրետակոծում էր տարածքը: 4-5 քիլոմետր երկարութեամբ ճանապարհը անցանք գիւղի մէջով, միաժամանակ փորձելով պաշտպանուել հրետանու հարուածներից:

Ապաճեանի զոհուելուց մօտ երեսուն րոպէ յետոյ մենք հասանք դիրք: Հակառակորդի յատուկ ջոկատայինների մի մասն արդէն լքել էին տարածքը, իսկ միւս մասը դիրքում փորձում էր տեղա-

ւորել իր բանակի զինծառայողներին:

Մեր դիրքում տեղաւորուել փորձող հակառակորդն այդ պահին մեր կողմից հակադրոհի էր սպասում, սակայն տեխնիկական առումով պատրաստ էր մարտին:

Մարտը տեւել է մօտ 30 րոպէ: Թշնամուն ետ չպրտելուց ու դիրքում ամրանալուց որոշ ժամանակ անց մեր հետախուզական վաշտի անձնակազմը հակառակորդի եւս մէկ գրոհ է կասեցրել, որը կրկին ձեռնարկուել էր նրանց յատուկ նշանակութեան ստորաբաժանման կողմից: Դրան յաջորդել է մեր ուղղութեամբ շուրջ տասը ժամ տեւած հրետակոծութիւնը, բայց չթողեցինք, որ մօտենան դիրքին:

Մեր կատարած ուսումնասիրու-

թիւնների համաձայն՝ վայրենութիւնները, որ մեր դիրքում կատարել էին հակառակորդի յատուկ ջոկատայինները, եղել էին գրոհի ընթացքում: Պէտք է եւս մէկ անգամ շեշտեմ, որ դիրքը գրոհել էին ոչ թէ Ատրպէյճանի կանոնաւոր բանակի զինծառայողները, այլեւ պայմանագրային ու վարձական հիմունքով մարտի մէջ մտցուած անձնակազմը:

Միաժամանակ հպարտութեամբ պէտք է նշեմ, որ ոչ միայն մեր, այլեւ շփման գծի միւս ուղղութիւններում 18-20 տարեկան հայ զինծառայողները կարողացել էին մեծ վնաս պատճառել հակառակորդի յատուկ նշանակութեան ստորաբաժանումներին ու տեխնիկային:

Վերոնշեալ դիրքի վրայ կատարած առաջին երկու գրոհի ժամանակ, երբ փորձում էր ճեղքել մեր պաշտպանութիւնը, հակառակորդը մեծ թուով կորուստ էր ունեցել, ինչի համար էլ վերջում նման վայրագութիւնների էր դիմել:

Խոնարհուած եմ այն զինծառայողների շիրիմներին, ովքեր հակառակորդի հինգից աւելի անգամ գերազանցող, լաւ պատրաստուած ու յատուկ նշանակութեան ստորաբաժանումներին կարողացել են այդչափ վնաս հասցնել ու պահել մեր հողը՝ այն սրբագործելով իրենց թափուած արեամբ ու կիսատ թողած երազանքներով, որը շարունակելը մեր պարտքն է:

Սիրաճուշ Եղիազարեան

(Արցախ-Երեւան)

[AB]

[AB]

ALINE

BEKEREJIAN

NOTAIRE • NOTARY

ՆՈՏԱՐ Ալին Պէքերեճեան

Achat	Առնուոյր	Purchase
Hypothèque	Անշարժ Կալուածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսատրում	Refinance
Mandat	Պատուէր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կալուածք	Estate
Marriage	Ամուսնութիւն	Marriage
Procuration	Փոխակորդագիր	Power of Attorney

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais
Services offered in Arabic, Armenian, French and English.

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Ծառայութիւնները կը մատուցուին Սրաբերէն, Դայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

Մոնթրէալի Հայ Աւետարանական Եկեղեցի

Դասախօսական շաբթ Ա.

Նիւթ՝
«Կրթական Աւետարանչութիւն եւ Հայ Աւետ. Եկեղեցին»

Դասախօս՝ Դոկտ. Շահէ Շնորհոթեան

Շաբաթ, 29 Ապրիլ 2017-ին
Երեկոյեան ժամը 7:30-ին

ՌԻՇԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՊՐԻԼ 1-ԷՆ ՍԿՍԵԱԼ ՊԱՀԱՆՁԵՑԷՔ

ՄԱՐՏԻԿ ՄԱՏԷՆՃԷԱՆԻ

ՆՈՐԱԳՈՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ
ՆՈՒԴՐՈՒԱԾ
ԱՊՐԻԼԵԱՆ ԶԱՌՕՐԵԱՅ
ՊԱՏԵՐԱԶՄԻ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ
ՊԱՏՈՒԹԵԱՆ
ԱՊՐԻԼ 1 - ԱՊՐԻԼ 7

Ստանալու համար դիմել
Գասպար Գասպարեանին 514 918.4633

2016-ի
ԶԱՌՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԸ
ԵՒ
ՄԵՐ «ԵՐԵՒԱՅ» ՆԵՐՈՒՆԵՐԸ

ՊԱՏԵՐԱՑԵՑ
ՄԱՐՏԻԿ ՄԱՏԷՆՃԷԱՆ

ՀՈՐԻԶՈՆ, 17 ԱՊՐԻԼ 2017 5

Հայոց Ցեղասպանության Ոգեկոչման Պաշտոնական Հանդիսություն

Քեպեգի Հայ Համայնքի Միացեալ մարմնի կազմակերպությամբ
Տեղի կ'ունենայ

**Ուրբաթ 21 Ապրիլ 21-ին
Երեկոյեան ժամը 7:30-ին**

Հայոց Ցեղասպանության նուիրողած
Լաւալի յուշարձանի առջեւ
coin d'Autoroute 440E & Boul. Daniel Johnson

Օրուան Պատգամաբեր
Ֆրանսահայ կազմակերպութիւնները
համակարգող խորհուրդի համանախագահ
Մուրատ Փափազեան

27 mai, 2017

**Marche pour l'Humanité et
la Prévention des Génocides**

Centre-ville de Montréal

Հորիզոն | www.horizonweekly.ca 

Համագգային Սանահին մասնաճյուղի «Թէյ, սուրճ եւ կարծիքներ» Ակումբի Այցելութիւնը Chagall-ի Գործերու Ցուցադրութեան



Մոնթրէալի Համագգային Հայ Կրթ. եւ Մշակ. Միութեան »Սանահին« մասնաճյուղի «Թէյ, սուրճ եւ կարծիքներ» ակումբը ուրբաթ, 17 Մարտ 2017-ին այցելութիւն մը կազմակերպած էր Marc Chagall-ի գործերու ցուցադրութեան Musée des beaux-arts de Montreal մէջ:

Արուեստասէրներու 46 հոգինոց խումբ մը առաւօտեան ժամը տասին հաւաքուեցաւ «Ա. Ահարոնեան» սրահին մէջ ուր մասնաճյուղի վարչութիւնը կազմակերպած էր կոկիկ սուրճի եւ քաղցրեղէնի հիւրասիրութիւն մը, որուն ընթացքին ընկՏ. Տիրուկ Մանճիկեան ներկայացուց արձանագործ եւ գեղանկարիչ Եւգենէ Եփրեմեան De Greff-ի կենսագրականը, որ հաճոյքով ընդունած էր խօսիլ Marc Chagall-ի կեանքի եւ արուեստի գլխաւոր եւ յատկանշական գիծերու մասին: ԸնկՏ. Տիրուկ Մանճիկեան նշեց որ Տիկին Եւգենէ Եփրեմեան ծնած է Լիբանան աւարտած է Պէյ-րութի Academie Des Beaux Arts-ը ապա հետեւած Փարիզի Ecole Nationale superieure des Beaux Arts Դասընթացներուն: Ան մասնակցած է բազմաթիւ միջազգային եւ տեղական ցուցահանդէսներու:

Ներկաները մեծ հետաքրքրութեամբ հետեւեցան Տիկին Եփրեմեանի բացատրութիւններուն, ան նշեց, որ Marc Chagall ծնած եւ մեծցած է հրեայ աղքատ միջավայրի մէջ, Ռուսիոյ Vitelst քաղաքին մէջ: Մանկութեան տարիներուն հետեւած եւ մասնակցած բոլոր հրէական աւանդական ծեսերու, հաւաքոյթներու եւ մեծապէս ազդուած է իր չըջապատէն: Այս մանկութեան յիշատակները, տպաւորութիւնները եւ երաժշտութիւնը միշտ ընկերակցած են ու զրսեւորուած իր գործերուն մէջ: Տիկին Եւգենէ Եփրեմեան նաեւ բացատրութիւններ տուաւ ցուցադրուած արուեստի գործերու, կրկէսի տիպարներու Chagall-ի ստեղծագործած տարազներու եւ ընկերակցող երաժշտութեան մասին:

Այս բացատրութիւններէն ետք խումբը Ս. Յակոբ Վարժարանի հանրակառքով ուղղուեցաւ դէպի թանգարան, ուր անոնք ըմբռնեցին Marc Chagall-ի շուրջ 350 գանազան ուղորտներու պատկանող գործերը Փարիզի, Նիւ-Եորքի, Մեքսիքոյի եւ հարաւային Ֆրանսայի մէջ ստեղծագործուած:



Այցելեցէք Ս. Յակոբ Առաջնորդանիստ
Մայր եկեղեցւոյ կայքէջը՝
www.sourphagop.net

Մարտիկ Մատենճեանի նոր հրատարակած գիրքը՝ «2016-ի քառօրեայ պատերազմը եւ մեր «երեխայ» հերոսները»

Մարտիկ Մատենճեանի «Նոր օրերու ֆետայիներ, Լիբանանի մեր տղաքը» գիրքին կը յաջորդէ ուրիշ գիրք մը, դարձեալ մեր տղոց սիրագործութիւններուն մասին, որոնք տեղի ունեցան 2016-ին Ապրիլ 1-էն մինչեւ Ապրիլ 5-ը, երբ հրադադարի համաձայնութիւն ստորագրուեցաւ, սակայն ազերի կողմը երբեք չյարգեց եւ տակաւին կը շարունակէ խախտել զայն՝ գրիթէ ամէն օր մեր երեխայ տղոցմէ զոհեր խելով. գունաւոր կողքով, 254 էջերէ բաղկացած, հարիւրէ աւելի նկարներով հարստացած, հայոց պատմութեան նորագոյն թեժ մարտերն ու երեխայ կարծուած մեր հերոս պատանիներու հերոսութիւնները կը նկարագրէ սոյն գիրքը:

Հարիւր տարի առաջ ուզեցին բնաջնջել մեզ: Հարիւր տարի ետք, այս անգամ ազերի թուրքը փորձեց կայծակնային յարձակումով մեր պատանիները անակնկալի բերել, բայց շնորհիւ մեր երեխաներու անձնութիւններուն, որոնք յագեցած են մեր ֆետայիներու սիրագործութեան պատմութիւններով, ներշնչուած իրենց հայրերուն ազատագրական պատերազմի հերոսապատումներէն, ցոյց տուին ամբողջ աշխարհին, մանաւանդ թուրքերուն, որ իրենք զաւակներն են Արցախի այսօրուան սահմանները գծած իրենց հայրերուն:

Ամբողջ հայ ազգը սրտի խոր ցաւով սգաց անոնց նահատակութիւնը, բայց նաեւ ազգային հպարտանքի առիթներ տուին անոնք մեր ժողովուրդին: Մատենճեանի գիրքին մէջ կ'ընէ հետեւեալ մէջբերումը, որուն մէջ վեթերան ազատամարտիկը իր հիացումը կը յայտնէ այդ «երեխայ» տղոց հանդէպ. «Մենք կարծեցինք, որ երեխէքը տակնուվրայ եղած ըլլալու են սաստիկ ռմբակոծումներէն: Բայց այդպէս չէր: Իրենք մեզ կը քաջալերէին եւ սիրտ կու տային»:

Ապա կ'անդրադառնայ նաեւ բժիշկին հիացումի արտայայտութեան՝ մեր երեխէքին մասին. «Խնչ սիրտ, ինչ քաջութիւն տղոց մօտ, որ մենք ուղղակի կը զարմանայինք: Կը կարծէինք, որ վիրաւոր զինուորը պիտի չկարենայ տոկալ, բայց ոչ թէ տոկալ, այլ այնքան արագ կ'ապաքինէին, որ կը զարմացնէր բոլորս: Կ'ուզէին ետ դառնալ եւ իրենց գիրքի ընկերներուն հետ ըլլալ՝ հայրենի հողը պաշտպանելու համար»:

Գիրքին մէջ տեղ գտած են նաեւ հրամանատարներուն սրտի ցաւը բայց նաեւ հպարտանքը արտայայտող խօսքերը. «ողջ մնալու մասին մտածող չկար: Թշնամին սպաննելու տենդէն բռնուած, անձնագոհութեան օրինակներ տուին: Թշնամին քանի մը զինուոր եւս սպաննելու սիրոյն, յանձնուելու տեղ ձեռքի ումբը կը պայթեցնէին՝ իրենց հետ տանելով թշնամի զինուորը: Մենք միայն հիացումով կը յիշենք անոնց նուիրաբերումը»:

Մատենճեան նշած է տարբեր պատմութիւններ ազերի զինուորին անմարդկային վերաբերմունքին մասին, որուն համար թրքերէն կ'ըսեն, «Էօլմիւշ քէտիէ բչաք չէքի-յօր»։ Թրքական բնազդին մասին է, որ կը թարգմանուի՝ սատկած կատուին դանակ կը քաշէ: Ունէինք գլխատուած զինուորներ, ականջները կտրուած զինձառնայողներ, խոշտանգուած անմեղ տարեց գիւղացիներ: Մատենճեան կը նշէ, որ մեր երեխէքը երկրորդ ցեղասպանութիւն մը կանխեցին: Փա՛ռք անոնց յիշատակին՝ առաջին տարեկիցին առթիւ:



Այցելեցէք Ս. Յակոբ Առաջնորդանիստ
Մայր եկեղեցւոյ կայքէջը՝
www.sourphagop.net

Linda KHARABOYAN, LL.B, D.D.N
Notaire et conseillère juridique



Testament
Mandat
Procuration
Financement
Immobilier
Attestations

Consultation personnalisée à domicile
Տուներու այցելութիւն ըստ փափաքի

1430, boulevard Saint-Martin O., Laval (Québec) H7S 1M9
T. 514.883.3498 F. 450.328.1258 E. linda@chezenotaire.ca

VIZUALIS
optométriste

DR SHANT DONABEDIAN

Centre d'Achat Fairview - Fairview Mall
Pointe Claire

514 695 2555 - VIZUALIS.CA

PHOTO
Cristal

(514) 744 4313



Berj Merdjanian

Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement

Video - Reproduction

647 Boul. Decarie
VSL Montreal QC
H4L 3L3

photocristal@hotmail.com
www.photocristal.com

Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենեակ

KRIKOR ABRAKIAN

VAHAN MATOSSIAN

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc, H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN
Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE •
REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉ •
ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE
& COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,
Laval Qc. H7V 1E8

Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

TAXI
MIRABEL
450-430-2650

Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիքը ունի
20 հայ թաքսի վարորդի Միքայէլ շրջակին մէջ:
Հաճեցէք հեռաձայնել Արային (514) 979-1317 քիւի:

Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number,
besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**



RE/MAX
RE/MAX 3000 inc.
Agence immobilière



Elie Berberian
Courtier immobilier / Real Estate Broker

C 514.519.3543
B 514.333.3000

ONGLES CAROLE
HAMPARTSOUMIAN

POSE D'ONGLES
RÉSINE ET POUDRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECouvreMENT SUR ONGLES
NATURELS

Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝
514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud
Montreal, QC H4J 2H6

Res: (514) 332-7021

Fax: (514) 332-7376

Cell: (514) 927-2666

krikormar@gmail.com

FIVE STAR
ELECTRIQUE
CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL

BEDROS NALPATIAN

442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM



SOSIE DERNERSESIAN
MORTGAGE AGENT
LICENCE #M12001830
716 Gordon Baker Road,
Unit 204A, Toronto
Ontario M2H 3B4



CENTUM™
Mortgage Wealth Solutions Inc.
License # 12147

Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders

416.662.6650 cell
centum.ca/sosie_demersesian

ALINE BEKEREJIAN
NOTAIRE - NOTARY

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Նոտար եւ Իրաւաբանական Խորհրդատու՝ Ալին Դեքերեճեան

Ապրիլեան քառօրեայ հերոսամարտը. յաղթանա՞լ, թե՞ պարտութիւն



Մէկ տարի առաջ՝ Ապրիլի 5-ին, Մոսկուայում Հայաստանի եւ Ատրպէյճանի ԶՈՒ ԳՇ պետերը պայ-մանաւորուեցին դադարեցնել Ապրիլի 2-ից արցախա-ատրպէյճանական շփման գծի երկայնքով ծաւալուող ռազմական գործողութիւնները: Դրանք պատմութեան մէջ մտան որպէս Ապրիլեան քառօրեայ պատերազմ:

Ցածր ինտենսիւութեամբ ռազմական գործողու-թիւնները շարունակուեցին մինչեւ Ապրիլի 28-ը: Այդ մարտերում հայկական կողմը 100-ից աւելի զոհ ունե-ցաւ՝ ինչպէս խաղաղ բնակչութեան, այնպէս էլ ԶՈւ շարքերում: Հակառակորդի վերահսկողութեանն անցան Արցախի պաշտպանական գծի հիւսիսարեւելեան եւ հա-րաւային ուղղութեամբ երկու ազդեցիկ յենակէտեր, այդ հատուածներում ատրպէյճանական կողմը մի քա-նի հարիւր մեթրով առաջխաղացում ունեցաւ:

Այդ տրամաթիք, բայց նաեւ հերոսական դրուագներով իրադարձութիւններին մէկամեայ հեռա-ւորութիւնից սթափ հայեացք նետելով՝ կարելի է վստահ ասել, որ թէեւ 1994 թ. հրադադարի հաստատումից ի վեր սա ամենալուրջագետր սրացումն էր, բայց դասա-կան իմաստով այն պատերազմ չէր: Իրականում քա-ռօրեայ այդ մարտերով հայկական բանակի զինուոր-ներն ու սպաները, յետոյ՝ նաեւ կամաւորականները, սխրանքի, անանձնական նուիրման եւ ինքնազոհողու-թեան աներեւակայելի օրինակներ ցոյց տալով, կանխե-ցին հայկական պաշտպանական առաջնագիծը ճեղքե-լու եւ հիմնական հարուածային ուժերի ներխուժումն ապահովելու օպերացիան: Քառօրեայ մարտերը կարճա-ժամկէտ կտրուածքով կանխեցին վերահաս լայնամասշ-տապ պատերազմը, տապալեցին բանակցային գործըն-թացում բեկում մտցնելու եւ լուծում պարտադրելու լծակ ստանալու՝ Պաքուի բլանները: Այս տեսանկիւնից, չնայած ցաւալի զոհերին, տարածքային կորուստներին, «քառօրեայ պատերազմը» հայկական կողմի համար մեծ չափով յաղթական էր:

Ատրպէյճանի ունեցած միակ շօշափելի առաւե-լութիւնը հոգեբանական էր. մի քանի հարիւր մեթր առաջխաղացումը բարձրացրեց հասարակութեան՝ դե-ռեւ Արցախեան պատերազմից ընկճուած մարտական ոգին եւ ինչ-որ առումով դարձաւ անտրամաբանական մեծ կորուստներն արդարացնելու միջոց: Մինչդեռ քա-ռօրեայ պատերազմը հայկական կողմի համար լուծեց մի քանի մարտավարական խնդիրներ:

1. Հակառակորդի մօտ ջարդեց հայկական բանակի անմարտունակութեան, բարոյալքուածութեան մասին կարծրատիպը, ինչպէս նաեւ ձեւաւորուած խոր համոզ-

մունքը, թէ սպառազինութեան հաշուին ունակ է մէկ հարուածով ծնկի բերել հայկական կողմին: Ատրպէյճա-նի իշխանութիւնները եւ հասարակութիւնը հասկացան, թէ ի՞նչ է արժենալու նոր պատերազմի սանձազերծումը:

2. Ձախողուած այդ յարձակումը թոյլ տուեց բա-ցայայտել եւ չէզոքացնել առաջնագծում ու պաշպա-նութեան ամբողջ համակարգում եղած թոյլ օղակները, հասկանալ հակառակորդի տակտիկական առանձնա-յատկութիւնները:

3. Ատրպէյճանը կորցրեց, այսպէս կոչուած, «անակնկալի էֆէքթը»: Այդ մեթոտն այլեւս չի աշ-խատելու: Դրանում Ատրպէյճանը թերեւս լիովին հա-մոզուեց այս տարուայ Փետրուարի 25-ին արցախեան ճակատում երկու ուղղութիւններով իրականացրած դիւերսիոն ներթափանցման անյաջող եւ իր համար մարդկային մեծ կորուստների յանգեցրած փորձերից յե-տոյ:

4. Դրդեց հայկական կողմին վերջապէս քայլեր ձեռնարկել ռազմական տեխնոլոգիական արդիւնաբե-րութեան ստեղծման, ներքին ռեսուրսների մոպիլիզաց-ման փրկիստիպալութեան վրայ խարսխուած «ազգ-բա-նակ» կոնցեպցիան գործարկելու ուղղութեամբ: Մուլ-տիպլիկատիւ էֆէքթով այն կարող է ազդել բոլոր կեն-սական ոլորտների զարգացման վրայ:

5. Հասարակութեանը, յատկապէս՝ լրատուադաշ-տին սովորեցրեց՝ ինչ է հիպրիտային պատերազմը, բարձրացրեց զգոնութիւնը՝ հակառակորդի տեղեկատ-ուական մանիպուլիացիոն թակարդներում չյայտնուե-լու առումով, սովորեցրեց ռազմաճակատային լրա-տուութեան հետ աշխատելու նրբութիւնները: Բանակի բաց տեղեկատուական քաղաքականութեան պայման-ներում սա կարեւոր ձեռքբերում է՝ ոչ միայն տեղե-կատուական անվտանգութեան, այլեւ տեղեկատուական «յարձակման» առումով: Այդ պատերազմից յետոյ բանակը հասարակութիւնից էլ աւելի կտրելու՝ Ատր-պէյճանի քաղաքականութեան պատճառով հայկական ԶԼՄ-ներն ու պաշտօնական աղբիւրներն ատրպէյճան-ցիների համար ենթագիտակցօրէն դառնում են աւելի արժանահաւատ, քան սեփական պետութեան, պաշտ-պանական գերատեսչութեան տեղեկատուական պրո-գնոզը: Իսկ դա Ատրպէյճանի հասարակական տրա-մադրութիւններն աւելի կառավարելի դարձնելու միջոց է:

6. Ատրպէյճանը մեծ հաշուով կորցրեց ԼՂ կար-գաւորման գործընթացում պատերազմի շանտաժային խաղաքարտն օգտագործելու հեռանկարը: Չնայած

ներկայիս փորձերին՝ այն այլեւս ո՛չ հայկական կողմի եւ ո՛չ էլ միջնորդ երկրների վրայ չի ազդում: Ատրպէյ-ճանն ապացուցեց, որ արցախեան հարցը ռազմական ճանապարհով լուծելն իր համար նոյնքան բարդ է, եթէ՝ ոչ աւելի, քան բանակցութիւններով: Ապրիլեան ձա-խողման պատճառով Պաքուն պատերազմական շան-տաժի կիրառման առումով կորցրեց այնպիսի կարեւոր դաշնակցի, ինչպիսին Ռուսաստանն է: Նոր յարձակում, որն այս անգամ իսկապէս կարող է մեծամասշտապ պա-տերազմի յանգել, Մոսկուան թոյլ տալ չի ցանկանում:

7. Այդ «պատերազմով», յատկապէս՝ դրա ըն-թացքում խաղաղ բնակիչների, գերեզարուած հայ զին-ծառայողների նկատմամբ իրականացրած գաղանային յանցագործութիւններով Ատրպէյճանը հասաւ նրան, որ ամրապնդեց միջազգային հանրութեան համոզմունքն Արցախն Ատրպէյճանի ենթակայութեանը վերադարձ-նելու անթոյլատրելութեան հարցում:

8. Ամրապնդեց հայկական կողմի բանակցային դիրքերը: Արդէն 2016 թ. Մայիսից ակնյայտ դարձաւ, որ հայկական կողմը փաստացի հրաժարոււմ է դրանց չուրջ բանակցութիւններից՝ դնելով հրադադարի լիա-կատար վերականգնման նախապայմանը: Ատրպէյճանն ի վիճակի չէ դա կատարել, որովհետեւ դրանով էլ աւելի կ'ամրապնդի առկայ սթաթիւս քուօն: Արդիւնքում՝ գործընթացը մտել է կատարեալ փակուղի, որի պատա-խանատուն է համարուում Պաքուն՝ հենց Ապրիլեան յարձակման արկածախնդրութեան պատճառով: Ստեղծ-ուել է մի վիճակ, երբ Ատրպէյճանը ոչ պատերազմ սկսելու «թոյլտուութիւն» է կարողանում ստանալ, ոչ էլ՝ արդիւնքի հասնել բանակցութիւններով:

Չնայած այս ամէնին՝ «Ապրիլեան պատերազմը», որն աւելի ճիշդ կը լինի անուանել Ապրիլեան քառօր-եայ հերոսամարտ, երկարաժամկէտ հեռանկարում չի կանխել հնարաւոր մասշտապային նոր պատերազմը: Դրա հաւանականութիւնը հիմա նոյնքան մեծ է, որքան անցած տարուայ Ապրիլի 6-ին: Բայց այդ հերոսամար-տը լուծեց ամենակարեւորը՝ ցոյց տուեց, որ այս երկրում ապրող մարդը կարող է չլինել լաւ քաղաքացի, թերա-նալ լաւ պետութիւն կառուցելու գործում, բայց ամ-բողջ էութեամբ հայրենապաշտ է եւ հայրենապաշտ-պան: Ապրիլեան հերոսամարտն իրականում հայ հասա-րակութեանը հանեց Ապրիլեան պատերազմի յաղթա-նակների դափնիների վրայ լեթարգիական քնի վիճա-կից:

Գեորգ Դարբիճեան



ՀԱՅԿԱԿԱՆ
ՑԵՂԱՍԳՐԱՆՈՒԹԻՒՆ
ARMENIAN GENOCIDE

24.04.17

AT 12:00 -ին

ՄԻԱՍՄԻՆ
TOGETHER!



Շնորհակալոր Սուրբ Զատիկ



MARC DEMERS
Maire de Laval

Vasilios KARIDOGIANNIS	Aline DIB	Ray KHALIL	Raynald ADAMS
L'ABORD-À-POUFFE	SAINT-MARTIN	SAINTE-DOROTHÉE	RENAUD

BUREAU DES CONSEILLERS MUNICIPAUX DU
MOUVEMENT LAVALLOIS
ÉQUIPE MARC DEMERS



CASSANDRA HEALTH CENTRE
WALK-IN & FAMILY PRACTICE
Dr. Marinosyan accepting new patients (416) 331-9111

Dr. Rupert Abdallian
General Physician

Dr. Marl Marinosyan
Family Doctor

Dr. Omayma Fouda
Family Physician

Dr. H. Kavazanjian
Family Physician

Dr. I. Manhas
Family Physician

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուութիւն մէջ:
- Արեան ճնշման ցնկութիւն եւ հետեւողականութիւն՝ անվճար
- Շաբաթախտի ցնկութիւն
- Դեղերը իրենց հասցեներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղչ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ցնկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր:

Դիմեցէք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:

հասցէ՝ 2040 Victoria Park Ave.
(Victoria Park & Cassandra)
Toronto, Ontario M1R 1V2
Tel: (416) 449-2040 Fax: (416) 449-2048

CASSANDRA I.D.A. PHARMACY

ԱՄԵՐԻԿԱՆԱՅԵՐԻ ՊՈՒՏԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԱՐԿԸ ՊՈՒՏԵԱՆ ԿԱՐԴԱՆ ՊՈՒՏԵԱՆ

ARMENIAN MEDICAL CENTRE & PHARMACY

PHARMACISTS
SARKIS BALIAN, BScPhm, RPh
MARAL BALIAN, PharmD, RPh
VARTAN BALIAN, PharmD, RPh



CASSANDRA HEALTH CENTRE

Walk-In Clinic onsite: (416) 331-9111

Հորիզոն

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Օգոստոս 25 - Սեպտեմբեր 8



Միացե՛ք «Հորիզոն»ի Հայաստան-Արցախ շրջապտոյտին, որպէսզի Սեպտեմբեր 2-ին Ստեփանակերտի մէջ, Արցախի մեր քոյրերուն եւ եղբայրներուն հետ միասին տօնենք Արցախի անկախութեան տարեդարձը:

Տեսարժան վայրերուն մէջ ընդգրկուած են.

Դաղիվանք, Գանձասար, Սեւանայ լիճ, Քարվաճառի անտառներ, Հանդաբերդ, Մակարավանք...

Խրախճանք Դիլիջանի անտառներուն մէջ եւ Արցախի հայկական գիւղերուն մէջ:

Այցելութիւն Հայկական Բանակի զօրանոց:

Գին՝ \$3450.00 Double Occupancy | \$3650.00 Single Occupancy

Օդանաւի տոմս, հիւրանոց, շրջագայութեան փոխադրամիջոցներ, նախաճաշ, ճաշ, ընթրիք եւ համերգներու, պտոյտներու (Տաթևի ճոպանուղի) տոմսեր ներառեալ: Ձեր հիւրանոցէն Երևանի Հանրապետութեան հրապարակ քաղելով 2 վայրկեան է՝ www.hotelaviatrans.am

Արձանագրուելու համար հեռաձայնել 514 332-3757 թիւին:



ՈՍՏԱՅՆ
Յաջորդ գրելիքս

Ընթերցողներ, իրաւամբ, հարց կրնան տալ երբեմն, թէ ուրկէ՞ կը ճարեմ գրելու նիւթերս: Շարքաթէ չաբաթ. տարուէ տարի. ահա աւելի քան 60 տարիէ ի վեր....:

Կը յուսամ, ի հարկէ, որ անոնք չեն ենթադրեր, թէ գրիչը ձեռք կ’առնեմ, սպիտակ թուղթը կը դնեմ առջեւս կամ կապոյտ պաստառը կը բանամ ու գրել կը սկսիմ: Ո՛չ, թերեւս կան այդպիսի գրողներ, բայց անոնք հասարակ մահկանացուներու շարքերուն պատկանելու չեն. անոնք հանճարներ են, հազուագիւտ էակներ: Հաւանաբար բառերը ցորենի հատիկի նման կը հոսին անոնց գրիչէն, կը շարուին տողերուն վրայ, կը դառնան հանճարեղ միտք, քերթուած, արձակ ու կը հմայեն ընթերցողը:

Ես անոնցմէ չեմ, ու պարապ էջը միշտ ալ կը ստիպէ, որ պահ մը կեդրոնանամ, հաւաքեմ մտքերս ու զանոնք ամփոփող նոթերս, ճշտեմ խորագիրս,— որ յօդուածի մը երկունքին կէսն է արդէն,— սահմանեմ մտքերուս շարքը, ապա միայն սկսիմ գրել՝ բառ առ բառ, նախադասութիւն առ նախադասութիւն, պարբերութիւն առ պարբերութիւն:

Վերնագրէն ետք, որով պիտի գրաւես ընթերցողին ուշադրութիւնը, ամենէն կարեւորը առաջին նախադասութիւնն է, որ պիտի հաստատէ ըսելիքդ ու ընթերցողին որոշել տայ շարունակե՞լ ընթերցումը, թէ՞ ոչ:

Անկէ ետք գործը կը դիւրանայ:

Սակայն չպատասխանեցի այն հարցումին, թէ ուրկէ՞ կու գան նիւթերս: Ի հարկէ չունիմ պաշտօնեայ մը, որուն միակ գործը ըլլայ ինծի համար հետաքրքրական նիւթեր փնտռել, անոնց վերաբերեալ անհրաժեշտ ուսումնասիրութիւնը ընել ու ինծի յանձնել: Ատիկա կրնար մոլսաս ընել, բայց ան ալ վստահելի չէ. մէյ մը հոն է, մէյ մը հոն չէ:

Ուրեմն ինծի կը մնայ աչքերս ու ականջներս բաց պահել եւ հետեւիլ թէ ի՞նչ կը կատարուի, ի՞նչ կը խօսուի շուրջս: Ծանօթներէս ոմանք գիրար կը գգուչացնեն— «այս մարդուն առջեւ ուշադիր պէտք է ըլլալ թէ

ինչ կ’ըսէք. կ’ելլէ յանկարծ վաղը այդ մասին կը գրէ»։ Սակայն, ուշադիր ըլլան կամ ոչ, ծանօթներ ու անծանօթներ ամեն ատեն, ամեն տեղ կամայ–ակամայ նիւթ կը հայթայթեն ինծի:

Այդ նիւթերը կրնան վերաբերիլ ապրուած կեանքի մը գրուագներուն, միջադէպերուն, յիշատակներուն եւ այլ բաներու: Ասոնք կ’իյնան «Ոստայն» վերտառութեան տակ եւ կը ստանան աւելի պատմողական բնոյթ:

Սակայն նիւթերը ատոնցմով չեն սահմանափակուիր: Աւելի յաճախ մեզ չարչրկող հարցերն են, միջադգային, ազգային թէ համայնքային, որոնք ուշադրութիւնս կը գրաւեն: Ուշադրութիւն գրաւելն ալ չի բաւեր. մէջս հակազդեցութիւն մը պէտք է յառաջանայ, որպէսզի այդ մասին մղուիմ գրելու: Ամենէն ազդու հակազդեցութիւնը՝ բարկութիւնն է, ի հարկէ. երեւոյթ մը, դէպք մը կամ արարք մը, որ ժխտական տպաւորութիւն կը թողէ վրաս, շատ հաւանական է, որ յօդուածի մը մէջ վերջ գտնէ:

Կան նաեւ զրական տպաւորութիւնները, որոնք գոհունակութիւն, հիացում կամ նման հակազդեցութիւններ կը յառաջացնեն եւ տեղ կը գտնեն գրութիւններու մէջ:

Այս բոլորը կ’երեւին «Այս անկիւնէն» վերտառութեան տակ:

Կուսակցական–միութենական–ժողովական կեանքէն բխած հարցերը, զրական կամ ժխտական, նիւթ կը հայթայթեն «Ընկերական մտորումներ»–ուս, որոնք տարիներու ընթացքին, կը հանդիսանան հասարակական փորձառութեանս գանձարանը:

Տակաւին այլ ոլորտներ ալ կան, ուր առաւել կամ նուազ յաճախականութեամբ մուտք գործած է գրիչս. մէկը՝ «Հանդիպումներ»–ն են, հարցազրոյցները, որոնք ունեցած եմ ու կ’ունենամ անձերու հետ, որոնց գործունէութիւնը,— իբր արուեստագէտ, իբր գրող կամ քաղաքական գործիչ,— սրած է հետաքրքրութիւնս: Միւսը «Ընթերցումներ»–ս են, զիս կլանած գրքերու, որոնց

մասին ունեցած տպաւորութիւններս ուզած եմ բաժնել ընթերցողներուս հետ:

Երբ երեւակայութիւնս թռիչք է առած, ու գալիքն եմ փորձած պատկերացնել՝

«Դեգերումներ, արձակ համարձակ» վերտառութեամբ երեւցած են գրածներս, իսկ երբ մեր կեանքի այս կամ այն երեւոյթը ուզած եմ ձաղկել,— քննադատելու մէկ տարբեր ձեւն է այդ,— ապա «Ժպտամարտ» կամ «Սուր անկիւնէն» եմ վերտառած յօդուածներս:

Գրածներուս մէջ յատուկ տեղ գրաւած են ուղեգրութիւններս, կամ այլ բառով՝ ուղեպատումներս՝ ըլլա՛յ Սփիւռքի տարբեր անկիւնները, ըլլա՛յ Հայաստան:

Բոլոր այս նիւթերը որոնելու ճիգ չեմ ըներ. անոնք կը վխտան շուրջս, բաւարար է, ինչպէս ըսի, աչք ու ականջ բաց պահել: Այդքանով չի վերջանար, սակայն, նիւթերու ձեռքբերումը. պէտք է տեղ մը արձանագրուին, դասաւորուին, որպէսզի չմոռցուին ու յարմար պահուն մշակուին:

Բայց այս չի նշանակեր, որ այդպէս, դասաւորուած ու կանոնաւոր կերպով կ’աշխատիմ: Ի վերջոյ կեանքը ունի իր անակնկալները, առաջնահերթութիւնները, եւ որքան ալ որ ծրագրեմ գալիք շաբաթ այս կամ այն նիւթը արծարծել, յանկարծ նոր դէպք մը, խօսք մը, գրուածք մը, կամ որեւէ այլ ազդակ կու գայ, իրար կ’անցրնէ ամեն ինչ, ի՛նք կը գրաւէ ուշադրութիւնս ու կը հասնի ընթերցողին՝ գրուելիքներու ցանկին վրայ թողելով միւս բոլոր նիւթերը:

Այդ ցանկը կ’երկարի, երբեմն տարիներո՛ւ տեւողութեամբ, եւ հոն գտնուող

նիւթերէն մէկն ու մէկը օր մըն ալ յանկարծ վերստին կ’այժմէականանայ ու...

կը մատուցուի ձեզի:

Այսպէս է, ահա, որ կը գրուի յաջորդ յօդուածս...

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ



Միացե՛ք «Հորիզոն»ի Հայաստան-Արցախ շրջապտոյտին, որպէսզի Սեպտեմբեր 2-ին Ստեփանակերտի մէջ, Արցախի մեր քոյրերուն եւ եղբայրներուն հետ միասին տօնենք Արցախի անկախութեան տարելոյսը:

Տեսարժան վայրերուն մէջ ընդգրկուած են.

Դադիվանք, Գանձասար, Մեւանայ լիճ, Քարվաճառի անտառներ, Հանդաբերդ, Մակարավանք...

Խրախճանք Դիլիջանի անտառներուն մէջ եւ Արցախի հայկական գիւղերուն մէջ:

Այցելութիւն Հայկական Բանակի զօրանոց:

Գին՝ \$34500.00 Double Occupancy | \$3650.00 Single Occupancy

Օդանաւի տոմս, հիւրանոց, շրջագայութեան փոխադրամիջոցներ, նախաճաշ, ճաշ, ընթրիք եւ համերգներու, պտոյտներու (Տաթեւի ճոպանուղի) տոմսեր ներառեալ: Ձեր հիւրանոցէն Երեւանի Հանրապետութեան հրապարակ քալելով 2 վայրկեան է՝

www.hotelaviatrans.am

Արձանագրուելու համար հեռաձայնել 514 332-3757 թիւին:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ Ս. ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱՏԳԱՄԸ

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ՍԿԻԶԲ՝ ՆՈՐ ԿԵԱՆՔԻ

Մկրտութեամբ անոր հետ միասին թաղուեցանք եւ մահուան հաղորդ եղանք, որպէսզի ինչպէս Քրիստոս Հօրը փառքով յարութիւն առաւ մեռելներէն, նոյնպէս ալ մենք նորոգուած կեանքով ապրինք» (Հռ 6.4):

Պօղոս առաքեալ հռոմէացիներուն ուղղած իր նամակին մէջ խորիմաստ բառերով մեղանչական մարդուն կը թեւադրէ մկրտութեամբ սրբուիլ եւ մաքրուիլ մեղքի աղտեղութենէն:

Քառասնօրեայ Մեծ պահոց չըջանը զգաստութեամբ աւարտելով, բոլորս մտածեցինք աստուածային, դրախտային կեանքի պարգեւած ուրախութեան մասին, միաժամանակ անդրադառնալով, թէ՝ ի՞նչ գին ունեցաւ դրախտային կեանքի ուրախութեան “ւ երջանկութեան կորուստը, մարդուն անհնազանդութեան պատճառով, երբ ան հրաժարեցաւ աստուածային կամքէն եւ օրէնքէն: Անառակ որդիի նման հեռացաւ Աստուծոյ տունէն եւ օրէնքէն, ընկղմեցաւ մեղքի տիղմին մէջ եւ կորսնցուց իր ուրախութիւնը, ազատութիւնն ու անդորրութիւնը: Նոյն պատկերով մարդը կորսնցուց Աստուծոյ տուած առաջին պատմուճանը հագնելու ուրախութիւնը, եւ մարդուն մէջ խաթարուեցաւ Աստուծոյ իսկական պատկերը:

Արդ, քառասնօրեայ պահեցողութեան այս շրջանը, լաւագոյն առիթ հանդիսացաւ՝ մտածելու, անդրադառնալու, մեր անձերը քննելու, տեսնելու հայրական ուրախութեան տանող ճամբան, որպէսզի անառակ որդիին նման վերադարձի ճամբան փնտռենք գտնենք, մեղքը խոստովանինք եւ մեր կեանքի ընթացքը փոխենք: Աւետարանին ականջալուր, հասկցանք, որ Աստուած անառակ որդիի հօր նման, որպէս մեր բոլորին Հայրը՝ ամենողորմ Տէրը, կը սպասէ մեզի, կը սպասէ մեր վերադարձին, լսելու մեր զղջումն ու խոստովանութիւնը: Ըիրշտ այս պատճառով, Պօղոս առաքեալ կը թելադրէ մեզի նախ՝ մեր կեանքը վերածել հոգեւորապէս ամէնօրեայ մկրտութեան:

Քրիստոնէական եկեղեցւոյ առաջին խորհուրդը՝ Մկրտութիւնը ջուրով լուացում է, խորհրդանշիլ մաքրութեան: Մկրտութեան ջուրին մէջ երեք անգամ ընկղմումով մարդը «կը մեռնի»՝ Քրիստոսի հետ, «կը խաչուի»՝ Քրիստոսի հետ եւ ապա «յարութիւն կ’առնէ»՝ Քրիստոսի հետ. կը դառնայ նոր մարդ՝ սրբուած իր սկզբնական՝ ագամական մեղքէն, տնկակից կը դառնայ Քրիստոսի, ինչպէս Պօղոս առաքեալը կը հաստատէ կորնթացիներուն ուղղած իր երկրորդ նամակին մէջ՝ ըսելով. «Ոնեէ մէկը, որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է. այլեւս չէ՝ այն՝ ինչ որ էր նախապէս, որովհետեւ ամբողջութեամբ նորոգուեցաւ» (Բ.Կր 5.17): Մէկ մարդու պատճառով մեղքը մոռտք գործեց աշխարհ եւ այդ իսկ պատճառով մահը տիրեց աշխարհի մէջ: Դարձեալ, մարդու մը պատճառով բոլորը մեռան, եւ սակայն մէ՛կ Մարգու մը պատճառով աստուածային շնորհքը տարածուեցաւ եւ առաւել կեանքը տիրեց աշխարհի մէջ:

Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ մարդու փրկութեան համար: Ան աշխարհ եկաւ հեռացած մարդուն Աստծոյ մօտեցնելու: Ան աշխարհ եկաւ մեղքի տիղմին մէջ ընկղմած մարդը բարձրացնելու: Ան աշխարհ եկաւ որպէս Գառն Աստծոյ՝ զոհագործուելու, խաչուելու, թաղուելու եւ իր հետ միանգամընդմիշտ գերեզմանելու մարդկութեան ուսերուն վրայ ծանրացած մեղքը. սակայն երեք օր յետոյ յարութիւն առնելով մեռելներէն՝ մարդկութեան նոր կեանք պարգեւեց եւ

առաջնորդեց դէպի յաւիտենական ուրախութիւն եւ փրկութիւն:

Պօղոս առաքեալ նոյն համարին մէջ մեզ կը թելադրէ հաղորդ դառնալ Քրիստոսի մահուան հետ: Հաղորդ դառնալ Քրիստոսի մահուան հետ կը նշանակէ՝ մեռնիլ Քրիստոսի հետ: Երբ կը հաւատանք Քրիստոսի, կը նշանակէ՝ որ մեր մէջ կը մեռնի «մեղաւոր անձը». սկզբնապէս բոլորս ալ երեխաներ էինք, այժմ հասունցած եւ գիտակից ենք: Սկզբնապէս բոլորս ալ ծառաներ եւ գերիներ էինք մեղքին, չարին եւ չարութեան, սակայն Քրիստոսի նման մեռնելով միայն կրնանք ազատուիլ մեղքի ծանրութենէն եւ տիրապետութենէն, կրնանք ազատուիլ մեղքի զօրութենէն եւ միանգամընդմիշտ հեռանալ մեղքի նետարձակումներէն, որպէսզի ապրինք Աստծոյ ժառանգակից որդիներու նման:

Պօղոս առաքեալ իր մտածումը շարունակելով կը հաստատէ, որ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի յարութիւնը տեղի ունեցաւ Հօր փառքով: Այո փառաւոր եւ հրաշափառ է յարութիւնը: Մարդոց մտքին եւ անոնց կեանքի փորձառութեան մէջ անհասկնալի էր պատահածը. իր իսկ աշակերտին կողմէ կը մատնուէր, հրեայ մեծամեծներու կողմէ ձերբակալուէր Քրիստոսը, Պիղատոսի մօտ դատուելու կը տարուէր, մի քանի օր առաջ «Ովսանաներով», սաղմոսներով եւ օրհներգութիւններով դիմաւորող ամբոխը նոյն Տիրոջը խաչի կը գոռար: Ո՛ւր էր այստեղ փառաւորը...


Այո՛, Աստուծոյ կամքը իրականանալու համար Քրիստոս սիրայօժար խաչ բարձրացաւ եւ խաչին վրայէն ներեց բոլոր անոնց՝ որոնք յանցանք գործած էին, եւ վերջին պահուն, նոյնիսկ իր կողքի խաչեալին՝ աւագակին ներեց՝ ըսելով. «Այսօր իսկ, Ինծի հետ Արքայութեան մէջ կ’ըլլաս», եւ Ան խաչին վրայ իր անարատ բազուկները տարածեց եւ իր մահկանացուն կնքեց: Պահ մը աշակերտները յուսալքուեցան, ուրացան եւ հեռացան խաչելութեան վայրէն: Ո՛ւր էր այստեղ հրաշալին:

Մարդկային միտքը այստեղ կանգ կ’առնէ, քանի որ այո, հրաշալին ու փառաւորը կը կատարուի:

Զարմանալին պատահեցաւ. Ան՝ որ կեանքի պարգեւ կուտար բոլորին, Ինքը որպէս պարգեւ խնդրուեցաւ Յովսէփ Արեմաթացիի կողմէն, որ ստանալով անոր մարմինը, կտաւով փաթթեց եւ իր սեփական կոյս գերեզմանին մէջ թաղեց ու մեծ քար մը գլորեց մուտքին, ուր գինուորները գիշեր-ցերեկ հսկեցին վայրը: Երրորդ օրը տեղի ունեցաւ մեծագոյն հրաշքը, հրաշքներու հրաշքը. Քրիստոս խորտակեց դժոխքի դռները, մահուան վրայ յաղթանակ տարաւ եւ յաղթական դուրս եկաւ գերեզմանէն՝ նոր եւ առաւել կեանք պարգեւելու այն մարդուն, որ պատրաստ էր իր հետ մեռնելու, թաղուելու եւ մանաւանդ իր հետ յարութիւն առնելու:

Քրիստոս կատարեալ մարմնով յարութիւն առաւ եւ առաջին անգամ երեւցաւ իւղղաբեր կրնանց եւ ապա աշակերտներուն: Հրեշտակները մեծագոյն աւետիսը տուին աշխարհին, որ «Ան այստեղ չէ, այլ յարութիւն առաւ»: Ահաւասիկ այսպէս տեղի ունեցաւ Քրիստոսի յարութիւնը՝ աստուածային փառքով եւ պատուով: Անոր երկրային ամբողջ կեանքը լեցուն էր աղքատութեամբ, զրպարտութեամբ, վիշտով, դատապարտութեամբ, թուքով, եւ խաչելութեամբ, որ վերացաւ միայն իր յարութեան փառքով:

Ահա թէ ինչո՛ւ Պօղոս առաքեալ կը թելադրէ մեզի ապրիլ նոր կեանք մը:



Այնպէս ինչպէս Քրիստոս պէտք է մեռնէր՝ մեռելներէն յարութիւն առնելու համար, մենք եւս պէտք է մեռնինք՝ թօթափելու համար հին մարդը՝ մեղանչական մարդը, որպէսզի յարութիւն առնենք Քրիստոսով՝ ապրելու համար նոր կեանք մը: Այնպէս ինչպէս Պօղոս առաքեալ եփեսացիներուն գրած իր նամակին մէջ կ’ըսէ. «Եղէ՛ք նոր մարդ՝ Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած, եւ ապրեցէ՛ք ճշմարիտ կեանք արդարութեամբ ու սրբութեամբ» (Եփ 4.24):

Այսօր դիւրին չէ հին կեանքին վերջ տալ. յաճախ կ’ըսենք, որ մենք քրիստոնեայ ենք: Կը գիտակցի՞նք, որ Քրիստոս որպէս Փրկիչ եկաւ մեզի մահուան ճիրաններէն ազատագրելու: Այսօր կրնա՞նք ըսել, որ «մահացած ենք» Քրիստոսի հետ, ասինքն՝ թօթափա՞ծ ենք հին մարդը, ազատա՞ծ ենք մեղքի ծանրութենէն եւ տիրապետութենէն, պատրա՞ստ ենք Քրիստոսի համար չարչարուելու, որպէս մեղաւորներ՝ խաչ բարձրանալու, մեր մեղանչական մարմինը թաղելու, որպէսզի կարողանանք Քրիստոսի հետ յարութիւն առնել, եւ ապրիլ նոր կեանք մը: Իսկ եթէ գիտակցաբար շարունակենք մեր հին կեանքը՝ մեղանչական կեանքը, կը նշանակէ, որ մեր մէջ հին մարդը «չէ մահացած», կը նշանակէ, որ մենք չենք հաւատար, եւ չենք ճանչնար Քրիստոսը. «Ով որ Քրիստոսի միացած կը մնայ, չի մեղանչեր. իսկ ով որ կը մեղանչէ՝ զայն երբեք տեսած ու ճանչցած չէ» (Ա. ՅՏ 3.6): Քրիստոսի մէջ ըլլալ, կը նշանակէ՝ միանալ Քրիստոսի, ան որ մեզի յաւիտենական կեանք կուտայ: Իսկ երբ մեղքի մէջ ըլլանք, ի՞նչ կու տայ մեզի Ան, եթէ ոչ միայն՝ յաւիտենական դատապարտում եւ մահ. «Որովհետեւ մեղքի վարձատրութիւնը մահ է, մինչ Աստուած, որպէս ձրի պարգեւ՝ յաւիտենական կեանք կու տայ մեր

Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցով» (Հռ 6.23):

Ահաւասիկ պատգամը Քրիստոսի հրաշափառ յարութեան: Հայ ժողովուրդը առաջին ազգը հանդիսացաւ, որ հոգեւորապէս մկրտուեցաւ, քրիստոնէութիւնը ընդունեց, դարձաւ Քրիստոսի ժառանգակիցը, ճանչցաւ ու հաւատաց Անոր, Անոր համար մեռաւ, թօթափեց հին մարդը՝ մեղանչական մարդը իր վրայէն, ամէն տեսակի տառապանք եւ նեղութիւն կրեց, ցեղասպանութեան ենթարկուեցաւ ու նահատակուեցաւ, քալեց Գողգոթայի ճանապարհով, խաչ բարձրացաւ, Քրիստոսի հետ թաղուեցաւ, բայց հաւատաց բացուող արշալոյսին, հրաշափառ յարութեան եւ յարութեամբ տրուած նոր եւ առաւել կեանքին: Այսօր ո՞րն է մեր ճանապարհը. հին մեղանչական կեանքը, թէ՛ յաւիտենական Արդարի՝ յարութեամբ նոր կեանք պարգեւող Նոր Ազամի՝ Քրիստոսի ճանապարհը՝ որ մարդը դէպի անմահ երջանկութիւն եւ յաւիտենական կեանք կ’առաջնորդէ:

Ազգովին վերանորոգենք մեր հաւատքը, յարութեան շունչով քալենք դէպի պայծառ ապագայ, եւ յարութեան փառքով, լուսաւոր ճանապարհով դէպի աստուածային տուն, հայրական ուրախութեան վայելքը ժառանգելու:

* * *

Քրիստոս յարեաւ ի մեռելոց:
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

Սիրոյ ջերմ ողջունիւ՝
ԲԱՐԳԷՆ ԱՐՔ. ԶԱՐԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈԾ ԹԵՄԻ

Ս. Զատիկ 2017

ՈՒՒՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Ամթիլիաս Փոխադրութիւնը

«ԲԱՐԵՊԱՍՏԻԿ ԹՈՒԱԿԱՆ»ԷՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԱՂԷՏԸ

1
Ընդհանրացած էր ստրկամտութիւնը: Թղթակցութիւն մը՝ այսպէս սկսած է. «Յուլիս 11, 1908 թուականն այնպիսի բարեբաստիկ թուական մ'է, համայն օսմանցիներուն համար, առանց խտրութեան ցեղի ու կրօնի, զոր կ'արժէ եւ պէտք է ոսկի տառերով արձանագրել ամենուրեք: Որովհետեւ բարեգթութեամբն ու արդարադատութեամբն մեր Օգոստոսիառ Կայսեր, Մեծն Սուլթան Ապտիւլ Համիտ Բ-ի, Օսմանեան Սահմանադրութիւնը (Գաւուկը Էսսաի) վերստին կը շնորհուի, իր ամբողջութեամբ»³⁵⁴:

Սահմանադրութիւնը նախ «շնորհուած» էր 1876-ի 23 Դեկտեմբերին, այսինքն՝ բարեգութն եւ արդարադատն Ապտիւլ Համիտի Կայսրութեան դահը գրաւելէն երեք ամիս եւ 23 օրեր ետք»³⁵⁵:

Զինք սուլթանութեան բերողներուն խոստացած էր Սահմանադրութիւնը հուշակել: Խոստումը տուած էր վէզիրներու խմբակի մը, որոնց կարկառուն դէմքն էր Ահմէտ Շէֆիք Միթլամֆ փաշան: Ան եւ իրեն համախոհներ ցանկացած էին, որ Կայսրութիւնը Սահմանադրական դրութեամբ ղեկավարուէր. այն ցանկութիւնը՝ Ապտիւլ Ազիզ Սուլթանի ժամանակէն, երբ շուքի մէջ ծրագիրներ որոճացած էին փրկելու համար Կայսրութեան աղիտալի վիճակը³⁵⁶, եւ որպէսզի վերջ մը դնէին եւրոպական հզօր տէրութիւններու կողմէ Օսմանեան գործերուն միջամտութեան³⁵⁷:

Ուրեմն, վէզիրներուն ցանկութիւնը չէր միայն, որ ճնշած էր վրան, այլեւ ան ենթարկուած էր արտաքին ճնշումներու, որոնց նպատակը սակայն՝ զօրավիզ կանգնել էր Օսմանեան Կայսրութեան ամբողջականութեան պահպանումին, քանի որ կը խորհէին, թէ անոր քայքայումին տեղ նախընտրելի էր զայն բարենորոգել³⁵⁸:

Սահմանադրութիւնը ընկերա-քաղաքական ներքին փոփոխութիւններու արդիւնքը չեղաւ, այլ եւրոպայէն ներածում մը³⁵⁹, Շարիալով ղեկավարուող

իրաւակարգին մէջ:

«Արեւելեան Մամուլ»ի 1877-ի Յունուարեան թիւին մէջ, խմբագիրը՝ Մատթէոս Մամուրեան անստորագիր ակնարկ մը նետելով 1876 տարուան վրայ, նախ ըսած է. «քաղաքական հորիզոնը փոթորկալի ամպեր թողլով կը մեկնի», ապա հարց տուած՝ «Այս ամպերն աւելի եւս պիտի սեւնա՞ն եւ շանթեր պիտի արձակե՞ն Արեւելքի գլխուն, թէ ոչ յանկարծական հովով մը պիտի ցրուին, դեռ եւս յայտնի չէ»³⁶⁰: Նոյն թիւին մէջ, եւ «Շահնուր» ստորագրութեամբ ալ ըսած. «Նոր տարւոյն հետ նոր զգեստ հագանք, նոր լեզու, նոր խոստում, նոր խորհուրդ, նոր սահման առինք. բայց մեր մարմինը, մեր բարբառը, մեր սիրտն ու գլուխը միշտ նոյնը կը մնան» հին, անմշակ ու պարագայ»³⁶¹: Այս «մեր»ը միայն հայերուն ակնարկութիւն չէ, այլ համայն Օսմանեան հպատակներուն, քանի որ Սահմանադրութեան հուշակումով՝ «հայ մարդ չկայ, այլ օսմանցի, քաղաքացի մարդ»³⁶²: Այլեւ անոր «հրաշքով»՝ ցեղական տարբերութիւնները վերցած են, «թէեւ պատմութիւնը զանոնք կը պահէ»³⁶³:

Ուշագրաւ է յօդուածագրին հեղինական լեզուն: Ապա նաեւ յստակատեսութիւնն ու կանխատեսութիւնը եղածին ու գալիքին կապակցաբար:

Օսմանեան Կայսրութեան պահպանումով մտահոգ եւրոպական ուժերուն մասին երգիծաբանած է, ըսելով. «տէրութիւններն ալ սկսեցին նազեր ընել ու պչրիլ, եւ չէ թէ միայն կիները: Ամէնքը նոյն էակին սիրահար» եւ ոչ մին կը թողու միւսին որ անոր սրտին տիրանայ: Եւ սիրուհին հեռուէն աչք ունք կ'ընէ եւ ոչ միոյն կամքը կը կատարէ, եւ իրաւունք ունի: Անովկանդ դիրք մը բռնելուն՝ քաջ գիտէ որ իր սիրահարներն իրեն համար օրին մէկը պիտի մենամարտին եւ հին ոխեր պիտի հանեն»³⁶⁴: Իսկ կանխատեսութիւնը, ահաւասիկ. «Երանի՛ այն ժողովուրդին, որ բաւական կենսական զօրութիւն ունի վտանգէն անվնաս պրծելու. եւ սովորաբար արդի ժամանակն ամենէն հաւատարիմ, պարկեշտ եւ խոհեմ ժողովուրդները չեն որ քաղաքական փոթորկէ անփորձ կ'ելնեն...»³⁶⁵: Այս

«Երանի»ն՝ մանաւանդ հայութեան համար էր, անկասկած:

Հրանդ Փաստրմաճեանի բացատրութեամբ, 1876-ի Դեկտեմբերին հուշակուած Օսմանեան Սահմանադրութիւնը՝ 19-րդ դարու բարեկարգութեան փորձերուն զաւեշտային գագաթումն էր³⁶⁶: Անիկա բոլոր նախորդ փորձերուն նման մեռեալ տառ մնաց³⁶⁷: Թէ ինչո՞ւ:

Որովհետեւ՝ հապէս բարեկարգման յանդգնութիւն մը չէր, այլ՝ անարգ կեղծաւորութիւն մը, ինչպէս Ծերեկնց բանաձեւած է³⁶⁸:

Սուլթան Համիտ զոհ չէր իր իշխանութիւնը սահմանափակող օրինադրութեամբ, ուստի շուտով՝ այլահնար չէզոքացումներով պիտի ձերբազատուէր զինք Սուլթան կարգողներէն, որոնք սկսած էին ծրագրել զինք գահազրկելու մասին, եւ «նորածին Սահմանադրութիւնը իր խանձարուրին մէջ» խեղդէր³⁶⁹ ու նուիրազործէր իր միահեծան իշխանութիւնը: Աւելիով մը ան ըսած է. «Սխալ մը ըրի, երբ փափաքեցայ հօրս՝ Ապտուլ Մէճիտի նմանիլ, որ համոզումով եւ ազատական կառոյցներով բարեկարգել ուզեց: Պէտք է որ հետեւէի մեծ հօրս՝ Սուլթան Մահմուտի քայլերուն: Հիմա իրեն պէս կը հասկնամ, որ միայն ուժով կարելի է ղեկավարել Աստուծոյ ինծի վստահուած ժողովուրդը»³⁷⁰:

Եւ ան ոչ թէ միայն ուժով ղեկավարեց «Աստուծոյ իրեն վստահուած ժողովուրդը», այլ նաեւ բռնութեամբ ու բրտութեամբ: Իր հպատակները տառապեցան, ամէնքն ալ: Ամէն տեսակ անիրաւութիւն, զրկանքներ, հալածանքներ, չարչարանքներ, աքսոր եւ սպանութեամբ ու թշուառացմամբ մահեր պատահեցան: Ան վիշապ մը դարձաւ:

Ու վիշապը չէր կրնար ձգել, որ նահանջող սահմաններով Կայսրութեան փոքրամասնութիւններուն մէջէն՝ իրենց տարրական իրաւունքները հետապնդող հայերը՝ աւելի առջեւ երթային: Ու այն առջեւ երթալն ալ՝ լոկ բարեփոխումն էր այն պայմաններուն, որոնք զիրենք կը պահէին ստրկութեան եւ նուաստացումի մէջ³⁷¹: Ան կ'որոշէր ու ջարդեր կը կազմակերպէր, որպէսզի անհարին դարձնէր

բարեփոխումներու գործադրութիւնը՝ «հայոց կարեւոր մէկ համեմատութիւնը բնաջնջելով»³⁷²:

1894-ի, 1895-ի եւ 1896-ի ջարդերու զոհերուն թիւը աւելի քան 250, 000 ցոյց տրուած է: Անոնց վրայ գումարուած է նաեւ բռնի իսլամացումներու թիւը՝ որ 40,000 է եղած³⁷³, եւ որոնց մէկ մասը ետքը վերադարձած է մայրենի եկեղեցի³⁷⁴, երկրէն հեռացողներուն թիւն ալ 100, 000-էն աւելի եղած է³⁷⁵: Հրանդ Փաստրմաճեան այսպէս կազմած է այն տարիներու կորուստներուն հաշուեցոյցը. «Կարելի է ըսել, թէ 1894-1896-ի ջարդերով Պոսոյ Կառավարութիւնը կրցաւ արուեստականօրէն 400,000 հոգի (...) պակսեցնել հայկական նահանգներու բնակչութեան»³⁷⁶:

Միսաք Քէլէշեան ջարդերուն մասին «մօտաւոր գաղափար մը տալու համար», հետեւեալ տեղեկագրութիւնը փոխանցած է.

1894-1896 «գլխաւոր ջարդեր»ը տեղի ունեցած են՝

1894 Օգոստոսէն Սեպտեմբեր՝ Մուշ, Սասուն: 1895 Սեպտեմբերին՝ Պոլիս: Հոկտեմբերին՝ Ազհիսար: Հոկտեմբերին՝ Տրապիզոն, Հաճըն, Երզնկա, Մաւրաշ, Կիւմիւշխանէ, Պիթլիս, Պրէճիկ, Ուրֆա, Խարբերդ, Գարահիսար, Էրզրում: Նոյեմբերին՝ Տիարպէքի, Արաբկիր, Մարտին, Մալաթիա, Ակն, Խարբերդ, Սեբաստիա, Կիւրին, Այնթապ, Մարզուան, Ամասիա, Եւդոկիա (Թոքատ), Մարաշ, Ենիճէ, Վան, Զիլէ, Կեսարիա: Դեկտեմբերին՝ Պրէճիկ: 1896-ի Յունուարին՝ Ուրֆա (Եղեսիա). Յունիսին՝ Վան. Օգոստոսին՝ Պոլիս. Սեպտեմբերին՝ Ակն. Հոկտեմբերին՝ Էրզրում. Նոյեմբերին՝ Էլէլէկ³⁷⁷:

Այս տեղեկագրութիւնը, ուրեմն, «մօտաւոր գաղափար մը» կու տայ միայն՝ «կոտորածներու վիթխարի տարողութեան եւ թշուառութեան համայնասփիւռ ծաւալին» վրայ³⁷⁸:

Արդեօ՞ք ժողովուրդի մը «բաւական կենսական զօրութիւն» ունենալը՝ կրնար զինք անվնաս պահել նման ահ-

ՈՒՒՏ... Ծար. էջ 13

SERVING THE ARMENIAN COMMUNITY SINCE 1984 Please call Serge Khatchadourian  STERLING AUTO CENTRE 416.494.9595 3815 Victoria Park Ave. (At Gordon Baker) Toronto, ON M1W 3Y6	Gary Chahinian ABR., Broker of Record - Owner RE/MAX DIAMOND Realty Inc. W torontohomes.ca E gary@remaxdiamond.com 416-258-8892 	 Noor Fine Food <i>Gourmet Mediterranean Cuisine</i> 1 High Meadow Place, Unit 9 Toronto, Ontario M9L 2Z5 Tel 416 745 3111 Fax 416 745 9337
 ANI Restaurant 905.761.6484 1450 Clark Ave. West, Thornhill ON L4J 7R5 	Sutton Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0 Annie Varbedian Sales Representative Direct: (416) 918-3615 Office: (416) 739-7200 Fax: (416) 739-9367 annievarbed@hotmial.com www.suttongroupadmiral.com 	 hearing aid source Andre Ayvazyan HIS B.A.S andre@HearingAidSource.ca 416 754 4327 (HEAR) Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9
 Crown Pastries Fine Middle Eastern Pastries 2086 Lawrence Ave East (Lawrence & Warden) Toronto ON. M1R 2Z5 Tel 647.351.2015 www.crownpastriesbaklava.com TASTE OF ALEPPO	I.D.A. Part of the "Royal" family of pharmacies. Pharmacists Sarkis Balian Vartan Balian Maral Abdalian Balian Cassandra Pharmacy Inc. 2040 Victoria Park Ave. Toronto, Ontario M1R 1V2 Tel. : 416.449.2040 Fax: 416.449.2048	ANI BAKERY ԱՆԻ ՓՈԱՊԱՆ Middle Eastern Pizza Lahmajoun ARSEN DABBAGHIAN  25 Howden Road, Unit #2 Scarborough, Ontario M1R 3C8 Tel: 416.285.7164

50-ը Անց Գեղեցիկ Կիներու Խորհուրդները

Ճուշտիս Ռոպերց, Սալմա Հայեք, Սինտի Քրաուֆորտ, Հալի Պերի 50-ը թեւակոխած, բայց տակաւին իրենց հմայքը պահող կիներ են:

Այն տեսքը, որ ունի կինը 20 տարեկանին, բնութեան պարզեւն է, իսկ 40 տարեկանին՝ անոր ջանքերու պտուղն է: Ասիկա կը նշանակէ, որ հետեւիլ կազմուածքին եւ արտաքինին, զբաղիլ սիրած աշխատանքով, նախասիրութիւն ունենալ, նոր բան մը ուսումնասիրել՝ անհրաժեշտ են ոչ միայն երիտասարդ տարիքին, այլ՝ ամբողջ կեանքի ընթացքին:

Ստորեւ կը ներկայացնենք ամբողջ աշխարհը իրենց գեղեցկութեամբ ապշեցնող 50-ը անց կիներու խորհուրդները, որոնք շատ աւելի թանկ են, քան՝ գեղեցկագիտական արտադրութիւնները:

1.- Ուտելիքը՝ որպէս դաւանանք:

Մենք այն ենք, ինչ կ'ուտենք: Բժիշկներու կարծիքով, սննդակարգը կ'ազդէ մորթի որակին եւ տարիքի հետ տեղի ունեցող փոփոխութիւններուն վրայ: Քաթրին Տէօնէօվ, Ճէյն Ֆոնտա, Սոֆիա Լորէն իրենց մորթին փայլքն ու անթերի տեսքը կը վերագրեն իրենց ուտելիքներուն:

2.- Հարցը հագուստի քանակին մէջ է, այլ՝ որակին:

Նոյնիսկ միջին եկամուտ ունեցող կինը կրնայ իրեն համար գնել որակաւոր հագուստ եւ զարդեղէններ: Այս բոլորը ժամանակի ընթացքին կը դառնան տարեց կնոջ վայելուչ տեսքի գրասականը:

3.- Տարիքի հետ հասարակական կեանքը չի մեռնիր:

50-ը անց կիներուն մէկ կարեւոր



տոկոսը ժամանակը կ'անցընէ հեռատեսիլին դիմաց, մինչդեռ երբ զաւակները արդէն մեծցած են եւ տեւական ուշադրութեան կարիք չունին, կարելի է աւելի յաճախ թատրոն, մշակութային ձեռնարկներու, ճաշարան եւ, ինչո՞ւ է, փապ երթալ եւ բարեկամներու հետ աւելի կապի մէջ մնալ:

4.- Բացայայտել նորը:

Ցանկալի է օրական նոր բան մը սորվիլ՝ կեանքին հանդէպ հետաքրքրութիւնը պահպանելով: Ասիկա եւս երիտասարդ կը պահէ կինը:

5.- Մարզանքին կարեւորութիւնը:

Մարզանքը անհրաժեշտ է ոչ միայն գեղեցիկ կազմուածք, այլեւ

ամուր մկաններ եւ առողջ միտք ունենալու համար: Ճէյն Ֆոնտան լաւագոյն օրինակն է:

6.- Դիմաւարդարումը:

Տարիքի հետ դիմաւարդարումը պէտք է նուազի, յատկապէս այն, ինչ կը վերաբերի շարժին: Շեշտուած չպարը կը ծերացնէ արդէն իսկ կնճռու դէմքը: Դիմաւարդարումը նախատեսուած է միայն մորթին թերութիւնները սրբագրելու համար:

7.- Հիւմորի զգացումը:

Կեանքին պէտք է դրականօրէն նայիլ եւ չփախցնել լուսաւոր պահերը: Իսկ կատակելն ու խնդալը կ'երիտասարդացնեն եւ կ'երկարաձգեն կեանքը:

Երեխան Դաստիարակելու Ոսկի Կանոններ՝ Մայր Թերեզայէն

- Ուշադիր՝ եղէք ձեր գործածած բառերուն, երբ երեխային հետ կը խօսիք: «Անխելք», «ծոյլ», «բթամիտ» եւ նմանօրինակ ածականներ վիրաւորական եւ նուաստացնող են. այս խօսքերը կը կործանեն երեխան եւ ժամանակի ընթացքին ան կը դառնայ անկարող եւ ծոյլ:

- Երեխան մի՛ վախցնէք հրէշներով, գայլերով, ոստիկանով: Ասոնք աւելի բարի չեն դարձներ երեխան:

- Զանացէք երեխային աչքերուն մնալ ձեր բարձունքին վրայ: Ան թող չտեսնէ ձեր թերութիւնները:

- Երեխան փոքր եւ անզօր էակ մը ըլլալով՝ կ'ուզէ իր կողքին ունենալ պաշտպանող անվիճելի հեղինակութիւն: Երեխան միշտ ծնողէն կը սպասէ ֆիզիքական եւ հոգեբանական պաշտպանութիւն: Եթէ երեխան ականատես ըլլայ ծնողներուն միջեւ վէճերու, անախորժութիւններու, ուրեմն ինչպէ՞ս կրնան ծնողները ակնկալել, որ լաւ դաստիարակութիւն պիտի տան իրենց զաւակին:

- Լաւ կ'ըլլայ, որ երբեք ձեռք չբարձրացնէք ձեր երեխային վրայ: Դուք անոր յիշողութեան մէջ զայրոյթի, ատելութեան յիշողութիւն կը ձգէք:

- Եթէ դուք ստիպուած էք պատժելու երեխան, ձեր դէմքին վրայ ո'չ զայրոյթի, ո'չ ալ ատելութեան արտայայտութիւն թող ըլլայ: Երեխան արագ կը մոռնայ ապտակը, բայց երբեք չի մոռնար զայրոյթով եւ ատելութեամբ հայեացքը:

ի 3 ñ 3 Í»ó¿ù Ó»ñ !ĐáñÇ½áÝŞÁ www.horizonweekly.ca



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 24 ԱՊՐԻԼ 2017
Ժողովրդային Հաւաք Օթթաուայի մէջ

Մեկնում Հայ Կեդրոններէ՝
Մոնթրէալ եւ Լաւալ առ. ժամը 9:00-ին
Թորոնթօ՝ առաւօտեան ժամը 6:00-ին
Գեմպրիճ՝ առաւօտեան ժամը 5:30-ին

ՀԱՅՈՑ
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
102-ԱՄԵԱԿԻ
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՈՆԹՐԵԱՆ-ԼԱՐԱԼ
Ուրբաթ, 21 Ապրիլ 2017
Երեկոյեան ժամը 7:30-ին
Լաւալի Հայոց Ցեղասպանութեան
Յուշարձանին առջեւ

ՀԱՍԻԼԹԸՆ
Կիրակի, 23 Ապրիլ 2017
Կ.Ե. Ժամը 2:00-ին
Համիլթընի Հայ Կեդրոն

ԹՈՐՈՆԹՕ
Կիրակի, 23 Ապրիլ 2017
Կ.Ե. Ժամը 3:00-ին
The Forest of Hope-Armenian Genocide
Memorial Park-Ashton Meadows Park

ՍԵՆԹ ԳԱԹԻՆՆՉ
Կիրակի, 23 Ապրիլ 2017
Կ.Ե. Ժամը 3:30-ին
Սենթ Գաթրինսի Հայ Կեդրոն

ԳԵՄՊՐԻՃ
Կիրակի, 23 Ապրիլ 2017
Կ.Ե. Ժամը 2:00-ին
Գեմպրիճի Հայ Կեդրոն

ՎԱՆԳՈՒԿԸՐ
Կիրակի, 23 Ապրիլ 2017
Կ.Ե. Ժամը 2:00-ին
Mountain View Celebration Hall, Armenian
Genocide Monument- 5455 Fraser Street

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԹՈՒՆԱԿԱՆՆԵՐ

ՄՐՈՐԷԱԼ-ԼԱԻԱԼ

ՀՕՄԻ Օրուան Տօնակատարութիւն
Կիրակի, 7 Մայիս 2017, կ.ե. ժամը 5:00-ին
Կազմակերպութեամբ՝
ՀՕՄԻ «Սօսէ» եւ «Մուշի» մասնաճիւղերուն

ՄՐՈՐԷԱԼ

**ՀՕՄԻ Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի
Տարեցմբ ալցելող յանձնախումբի 30-ամեակի տօնակատարութիւն**
Կիրակի, 30 Ապրիլ 2017, կ.ե. ժամը 5:00-ին
Ա. Ահարոնեան սրահէն ներս

ՄՐՈՐԷԱԼ

Հայագիտական Լսարան: Կազմակերպութեամբ՝ Համագգայինի Գա-
նատայի Շրջանային վարչութեան, նիւթ՝ Ցեղի գաղափարը եւ ամերիկահայ
գաղթականութիւնը: Ծարաթ 6 եւ Կիրակի 7 Մայիս 2017:

**Համագգայինի «Մուշեղ Իշխան» գրադարանը խիստ կարիքը ունի
կամաւոր մարդուծի:** Կը խնդրենք, որ հետաքրքրուողները հեռաձայնով
կապ պահեն գրադարանի անձնակազմին հետ, երեքշաբթի եւ Հինգշաբթի
օրերը կ.ե. ժամը 1:00-5:00, իսկ Կիրակի օրերը առաւօտեան ժամը 11:00-էն
կ.ե. ժամը 2:00: Հեռաձայնի թիւ՝ 514 337-7753:

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

Համագգային Գանատայի Շրջանային վարչութիւնը կը գուժէ մահը
ընկեր **ՍԵՐԺ ՍԱՐՈՑԵԱՆԻ** եւ խորին ցաւակցութիւնները կը յայտնէ իր հա-
րազատներուն:

ԾՆՈՐՀԱԿԱԼԻՔ-ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այսու կու գանք մեր անհուն շնորհակա-
լութիւնները յայտնել՝ Գանատայի Հայոց Թեմի
Առաջնորդ Գերշ. Տ. Բարգէն Սրբ. Արք. Չարեանին,
Գերշ. Տ. Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանին, Արք. Տ. Գառնիկ Ա. Քեմյ. Գոյունեանին, Արք. Տ. Գարրիէլ
Քեմյ. Գամայեանին, ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» եւ
Լաւալի «Մուշի» մասնաճիւղերու վարչութիւննե-
րուն, եւ բոլոր անոնց որոնք անձամբ, նուիրա-
տութեամբ, բացիկով կամ հեռաձայնով ցաւա-
կից եղան մեր սուգին՝ մեր սիրելի մօր, մեծ մօր,
մեծ-մեծ մօր, քոյր, հօրաքոյր եւ հարազատին՝ ողբ.
ԼԻՆՏԱ ՔԷՔԼԻԿԵԱՆ-ՆԻԿՈԼԵԱՆԻ մահուան տխուր
առիթով:

Արք. Տ. Հրայր Ա. Քեմյ. Նիկոլեան եւ Երէցկին Ռիթա Նիկոլեան եւ
զաւակները, Տ. եւ Տ. Գրիգոր եւ Անի Ծառուկեաններ եւ զաւակները, Տ. եւ Տ.
Յովհաննէս եւ Ժագիկ Սէրօբեան եւ զաւակները, Տ. եւ Տ. Գրիգոր եւ Մոնիք
Քէֆիկեան եւ զաւակները, ինչպէս նաեւ համայն Նիկոլեան, Քէֆիկեան,
Ծառուկեան, Սէրօբեան, Սաղտընեան, Թաքուլեան, Շահինեան եւ Կալիպուս
ընտանիքները կը ծանուցեն՝ թէ ողբացեալ **ԼԻՆՏԱ ՔԷՔԼԻԿԵԱՆ-ՆԻԿՈԼԵԱՆԻ**
հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 23 Ապրիլ 2017-ին,
Լաւալի Ա. Գէորգ եկեղեցւոյ մէջ:

ԺՈՂՈՎՆԵՐ

ՀՄԸՄ ԼԱԻԱԼ-ի Տարեկան ընդհանուր ժողովը տեղի պիտի ունե-
նայ՝ Ա.- Հինգշաբթի, 20 Ապրիլ 2017-ին եւ Բ.- Հինգշաբթի, 11 Մայիս 2017-ին:

**ՀՄԸՄ Կամք մասնաճիւղի անդամական տարեկան ընդհանուր ժո-
ղովներ** - Բ. նիստ՝ Չորեքշաբթի, 19 Ապրիլ 2017-ին, երեկոյեան ժամը 7:30-ին,
«Ա. Ահարոնեան» սրահին մէջ Գ. նիստ՝ Չորեքշաբթի, 10 Մայիս 2017-ին,
երեկոյեան ժամը 7:30-ին, «Ա. Ահարոնեան» սրահին մէջ:

ՀՂՂՈՒՄ

«Հորիզոն»ի 17 Մարտ 2017-ի թիւին 12-րդ էջին մէջ լոյս տեսած
«ՀՕՄ-ի 107-ամեակի նշում Համիթընի մէջ» թղթակցութեան մէջ թիրիմա-
ցարար վրիպած է սխալ մը. գրուած է, թէ պարգեւատրուող ՀՕՄ-ական ըն-
կերուիիններէն Սիրան Թէրզեան կը ստանայ 25 տարուան ծառայութեան
համար զարդասեղ, մինչ պէտք է ըլլայ՝ 50 տարուան ծառայութեան վկայա-
գիր:

ՈՒՍՏ... Սկիզբը էջ 11

*ռելի կոտորածներու փոթորիկէն: 1876-ին «շնորհուած» Սահմանադրութիւնէն ետք՝
հայութեան գլխուն ամպերը աւելի եւս սեւցած էին եւ շանփեր արձակած:*

ԳԱՌՆԻԿ ԱԼ. Ք. Գ.

- ԱՂԲԻՐՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ*
354.- *Ազատութեան Տօնը, Բն, 16 Յուլիս 1908, է 1:*
355.- *Գուրգէն Շաղրճեան, Ապտիւ Համիտ Բ. / Կարմիր Սուլթանը, Պէյրուք,*
1980, է 150: *Յետ այսու եՀԲ:*
356.- *Ն, է 86:*
357.- *Ն, է 150:*
358.- *ՓՀՊ, էէ 386-387:*
359.- Huseyin Korkut, Critical Analysis of the Ottoman Constitution (1876), է
114: *Յետ այսու՝ KAOC:*
360.- *Արեւելեան Մամուլ, Մատթէոս Մամուրեան, 1876, Յունուար, 1877, է 32:*
Յետ այսու՝ ԱՄ:
361.- *Ն, Շահնուր, Թղթակցութիւն, Յունուար, 1877, է 9:*
362.- *Անդ:*
363.- *Ն, է 15:*
364.- *Ն, է 9:*
365.- *Ն, է 15:*
366.- *ՓՀՊ, է 388:*
367.- *Ն, է 389:*
368.- *ԱՄ, Ծերենց, Թղթակցութիւն, Փետրուար, 1877, էջ 51:*
369.- *ԵՀԲ, է 320:*
370.- Shaw and Shaw, History of the Ottoman Empire and Modern Turkey,
Cambridge, 1977, է 172: *Յետ այսու՝ SHOT:*
371.- *ՓՀՊ, է 437:*
372.- *Ն, էջ 442:*
373.- *Ն, էթ 442-443:*
374.- *ՔՍՄ, է 536:*
375.- *ՓՀՊ, է 443:*
376.- *Ն, 442-443:*
377.- *ՔՍՄ, էջ 536:*
378.- *Անդ:*



Այցելեցէք Ս. Յակոբ Առաջնորդանիստ
Մայր եկեղեցւոյ կայքէջը՝
www.sourphagop.net



Կը փնտռենք հայ տիկին մը,
որ խօսի հայերէն, կարենայ
խնամել, ճաշ պատրաստել,
գրադէցնել ու ապրիլ տարեց
տիկնոջ մը տանը մէջ շաբաթը
5 կամ 7 օր: Հաճեցէք հեռաձայնել
Պրն. Նազարեանին
514 576-3097 թիւին:

We need an Armenian lady
who can take care of an old
woman in her home. Must
speak Armenian, prepare
food and watch T.V. for 5
or 7 days a week. Please
contact **Mr. Nazarian,**
cell 514 576-3097.

horiZon

H O R I Z O N
Hebdomadaire arménien
Armenian Weekly
Publié par / Published by
Les Publications Arméniennes
(1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

Abonnement annuel /
Yearly subscription
Canada
2^e classe - 2nd class: \$80
plus applicable taxes
1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
Sylva Ehramdjian-Bachekjian
(General Manager)
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail: sylvia@horizonweekly.ca
Courrier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales
du Québec et du Canada - ISSN 0708580X

Գրիգոր Հոբոյեան, (416) 494-1921
Ժագ Վարպետեան, (416) 722-9225

Թորոնթոյի
Ներկայացուցիչներ՝

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Գալուստ Պապեան, Վազգէն Տէկիրմէնթաշ,

Financé par le
gouvernement
du Canada

Funded by the
Government
of Canada

Canada

ԱՍՏՂԱԳՈՒԾԱԿ



ԽՈՅ (21 Մարտեն 20 Ապրիլ) - Շաբթուան ընթացքին տեղի ունեցող պատահարները զբաղ պիտի պահեն քեզ, սակայն փորձէ աշխատանքային ժամերդ յարգել եւ հեռու մնալ աւելորդ յոգնութենէ։ Շաբաթաւերջին հաճելի ժամանակ պիտի անցնես բարեկամներով շրջապատուած եւ առիթը պիտի ունենաս հանգստանալու։

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) - Մարմնական կարողութիւններդ բաւական բարձր են այս շաբաթ, այդ պատճառով ալ գործերդ շատ լաւ կ’ընթանան, միեւնոյն ժամանակ ինքզինք փաստելու պահանջը կը զգաս ամէն վայրկեան, պետք չունիս ինքզինքդ չարչրկելու այդքան։

ԵՐԿՈՒՐՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս) - Գործընկերներդ եւ գործատերդ շատ գոհ են քեզմէ այս շրջանին։ Միշտ մէջտեղերն են եւ բոլոր հարցերուն դրական ներդրում կ’ունենան։ Սակայն այս բոլորը շուրջիններուդ նախանձը կը շարժէ, զգոյշ ըլլալու ես անոնց նկատմամբ։

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս) - Նոր գաղափարներդ եւ առաջարկներդ յայտնելու մի՛ վարանիր, գործընկերներդ եւ գործատերդ հասկացողութիւն պիտի ցուցաբերեն անոնց հանդէպ եւ բաւական ուրախ պիտի ըլլան այս փոփոխութիւններով եւ նորութիւններով։

ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս) - Ինքզինքդ վտանգի կ’ենթարկես այս շրջանին, կ’ուզես նպատակիդ հասնիլ ամէն գնով, բայց անբարենպաստ պայմանները ջղային դարձուցած են քեզ, այդ պատճառով ալ ժխտական եւ յարձակողական եղած է վերաբերմունքդ շուրջիններուդ հետ։

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) - Այս շրջանին աւելի զօրաւոր կը զգաս ինքզինքդ, սովորականէն շատ աւելի բարձր է ներուժդ մանաւանդ այս շաբաթ, հետեւաբար օգտուիր այս առիթէն եւ իրագործէ այն ինչ որ կը հետաձգէիր յաճախ։ Բարեբեր շաբաթ մըն է։

ԿՇԻՈՔ (24 Սեպտեմբերէն 23 Յոկտեմբեր) - Յոգ տար առողջութեանդ այս շաբաթ, թշնամիներով շրջապատուած ես, նախանձոտ մարդիկ գիշեր-ցերեկ կը հետապնդեն լուրերդ, այս մէկը կը մտատանջէ քեզ, այդ պատճառով ալ կրնաս հիւանդանալ, հետեւաբար զգոյշ եղիր։

ԿԱՐԻԾ (24 Յոկտեմբերէն 23 Նոյեմբեր) - Անհոգ վերաբերմունք ունիս առողջութեանդ նկատմամբ, այս մէկը կը վնասէ քեզի, հոգ տար ուտելիքներուդ, սննդարար ճաշատեսակներով սնուիր այս շրջանին, որովհետեւ բաւական ճնշուածութիւն կ’ապրիս գործիդ մէջ։

ԱՐԵՂՆԱՎՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) - Մի՛ փորձեր կարծիքդ պարտադրել շուրջիններուդ, պարտաւոր ես յարգել իրենց կարծիքները եւս, միշտ չէ, որ քու մտածածդ ճիշդ է, համբերող եւ լսող եղիր, շատախօսութենէ հեռացիր այս շրջանին, որպէսզի անիմաստ գրոյցներու չընուիս։

ԱՅԾԵՂԶԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) - Աւելորդ ինքնավստահութիւն մը կը տիրէ տրամադրութեանդ այս շաբաթ, շուրջիններդ ալ կը նկատեն այս մէկը , սակայն կը փորձեն հասկացողութեամբ վերաբերիլ, փոխէ՛ այս ընթացքդ, այլապէս պիտի կորսնցնես սրտակից բարեկամներդ։

ԾՈՎԱՆՈՅԾ (21 Յունուարէն 19 Փետրուար) - Կը փորձես քանի մը գործ միեւնոյն ժամանակ ընել, այս մէկը կը ջլատէ քեզ, հակառակ որ դուն ոչ մէկ տկարութիւն կը զգաս հիմակուհիմա, սակայն եթէ այսպէս շարունակես յանկարծ անախորժելի անակնկալներու դէմ յանդիման պիտի գտնուիս։

ԶՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) - Այնքան հաւասարակշռուած է վերաբերմունքդ, որ գործաւորիդդ ուշադրութիւնը կը գրաւէ, այս մեծապէս կը վստահի քեզի։ Օգտուի՛ այս առիթէն եւ ամսականի յաւելում պահանջէ, անմիջապէս պիտի ընդառաջէ, որովհետեւ գոհ է քեզմէ։

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆ. ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
Մարի Փռչեանի մահուան առթիւ
Րէնա Ստեփանեան 30
Տ. եւ Տ. Ֆրանկիւլ Գալայճեան 50
Սուլթան Փալանճեան 40
Քնար Եափիճեան 20
Տ. եւ Տ. Մանուկ Գասարճեան 30
Տ. եւ Տ. Արսո Գաբրիէլեան 50

Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ԼԱԻԱԼ Ողբ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՕՓՈԽԶԵԱՆԻ մահուան առթիւ,
փոխան ծաղկեպսակի
Տ.Տ. Կարօ, Անժէլ Հոփուրեան 100
Հ.Օ.Մ.–ի Շուշի Մասնաճիւղի Վարչութիւն 100
Մարաշի Հայրենակցական Միութիւն 100
Տ.Տ. Ռաֆֆի, Ալէքս Հոփուրեան 50
Տ.Տ. Էլի, Լարա Պէրպէրեան 60
Տ.Տ. Անդրանիկ Հալաճեան 30
Տ.Տ. Սեպուհ, Ալին Դանիէլեան 20
Տ.Տ. Ցոլակ Պետրոսեան 50
Տ.Տ. Կարօ Պողոսճիկեան 20
Տ.Տ. Յակոբ Տէօդողլեան 25
Տ.Տ. Յակոբ, Սալբի Լախոյեան 50
Տ.Տ. Վարուժան, Սիրուն Մելքոնեան 30
Տ.Տ. Յարութի, Նորա Հացազործեան 50
Տ.Տ. Յարութիւն, Հերմինէ Մանուկեան 30
Տ.Տ. Կարպիս, Լենա Աբրահամեան 20

Տիկ. Սեզա Գրիգորեան 30
Տ.Տ. Գրիգոր, Անի Ծառուկեան 20
Տ.Տ. Բիւզանդ Լախոյեան 20
Տ.Տ. Մարգ Ծլիվիէ եւ Սօնա Լախոյեան 20
Տիկ. Հերմինէ ԾաՀինեան 50
Տ.Տ. Սարգիս ԾաՀինեան 75
Տ.Տ. Իշխան, Էյօ Լատոյեան 20
Տ.Տ. Պօղոս, Թադուհի եւ Ալին Աճէմեան 40
Տ.Տ. Զաւէն, Սեմալին Զօքաքլեան 25
Տ.Տ. Յակոբ, Տիրուկ Մանճիկեան 30

Ողբ. Սուրիահայ զոհերու յիշատակին։
Տ.Տ. Յակոբ Ոսկերիչեան 30
Տ.Տ. Մարտիկ Տէկիրճէնճեան եւ զւկնք. 20
Ողբ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՕՓՈԽԶԵԱՆԻ մահուան 7–օրէքին առթիւ։
Տիկ. Տիգրանուհի Թօփուզեան եւ զւկնք. 30
Տ.Տ. Մոսիկ, Սեզա Թօփուզեան եւ զւկնք. 20
Տիկ. Զապէլ Աճէմեան 20
Ողբ. ԺԻՐԱՅՐ ՔԻՏԻՔԵԱՆԻ մահուան 22–րդ տարեկիցին առթիւ։
Տիկ. Մատլէն Քիտիքեան եւ զաւակներ Գէորգ, Յովհաննէս 25
Ողբ. ԱՐԱՔՍԻ ԾԻՐԻՆԵԱՆԻ մահուան առթիւ, մահացած Քալոֆորնիա։
Տ.Տ. Միլտիշ, Էլիզապէթ Շիրինեան 100
Տիկ. Ազնիւ Շիրինեան եւ զւկնք. 40
Տ.Տ. Արծրուն, Արուսեակ Պետրոսեան 20
Տ.Տ. Վանական, Սեզա Ավտոյեան 20
Տ.Տ. Մովսէս, Վանտա Քէօսէլեան 50
Տ.Տ. Գրիգոր, Գոհար Փունարճեան 50
Տ.Տ. Վարդիվառ, Արփի Փանոսեան եւ զաւակ 40
Ողբ. ԼԵՒՈՆ ԺԱՄԿՈԶԵԱՆԻ մահուան 10րդ տարեկիցին առթիւ եւ ԷՏՄՈՆ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ յիշատակին։
Տիկ. Այտա Ժամկոչեան 40
Տ.Տ. Արա, Լուսին Փալանճեան եւ զւկնք. 40
Ողբ. ՀԱՅԿ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ մահուան 6–րդ տարեկիցին առթիւ եւ ԱՆԱՀԻՏ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ յիշատակին։
Տ.Տ. Ռաֆֆի, Սիլվա Գազանճեան եւ Ռաֆայէլ 50
Ողբ. ՃՈՐՃ ՄԷՆՔԵՆԵԱՆԻ յիշա–

տակին։
Տիկ. Հայարփի Մէնէշեան եւ զւկնք. 20
Ողբ. ՆԵՐՍԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԻ մահուան 7–րդ տարեկիցին առթիւ։
Տիկ. Անի Գարազաչեան եւ դուստրը Ալինա 25
Ողբ. ՎՐԷԺ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ մահուան 3–րդ տարեկիցին առ–
թիւ։
Տիկ. Լուսին Էյմաճեան եւ զւկնք. 10

ՀՕՄԻ «ՍՕՍԷ» ՄԱՍՆԱՃԻԻՂԻՆ, ՄՈՆԹՐԷԱԼ
Telus Bienfaisance
Արի Քէօսէլեան 500
Արի Միրզայեան 500
Արա Արուշեան 200
Օհան եւ Ժազին Տաղլեան 150
Վարսենիկ Սարգիսեան 100
Շաքէ Ստեփանեան 200
ՆՈՒԱՐԴ ՊԱՍՓԵՀԻՎԱՆԻ ՄԱՀ–ՈՒԱՆ ԱՌԹԻԻ
Տ. եւ Տ. Բաբգէն եւ Արմինէ Կաբապետեան 100
Գաբրիէլեան Անահիտ եւ Կարպիս 50

ՍՕՍԷ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻՆ
Սարին Շիթիլեան 280
Տիկին Մարի Գաւաֆեան ամ.200
Տ. եւ Տ. Բաբգէն եւ Արմինէ Կաբապետեան ամ.200
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ 4 ՈՒՍԱՆՈՂԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԿԻՐԱԹՈՇԱԿ
ՀՕՄ–ի տարեցները այցելող յանձնախումբ 1600
ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՅՈՒՄԻՐՆ
Քարաօղլանեան Իզմինի 50
Զօքաբեան Մարի 20
ՏԱՐԵՑԻՆԵՐ ԱՅՑԵԼՈՂ ՅԱՆՁՆԱ–ՅՈՒՄԻՐՆ
Նիկողոսեան Աւետիս 350
Շաքլանեան Զուարթ 100
Նաիմ Պաթանի 100
Հանեան Լուսին 100
Գէորգեան Ալիս 700
Նահապետեան Հայկօ 120
ՀՕՄ– Ի ՀՈԳԵՀԱՆԳԻՍԻՏԻ ԱՌ–ԹԻԻ
Եաղճեան Նոէմի 100
ԶԱՔՄԱՔԵԱՆ ՖԷՐՏԻՆԻ ՄԱՀ–ՈՒԱՆ ԱՌԹԻԻ
Վէրժին Պուտակեան Զաքմաքեան 300
Օհանեան Ռիթա 50
Նահապետեան Հայկօ 50
Թաւրիզեան Սեզա 50
Զուրիկեան Սիրվարդ 30
ԱՐԱՊԵԱՆ ՌԵԲԵԿԱՅԻ ՄԱՀ–ՈՒԱՆ ԱՌԹԻԻ
Գուրմաճեան Բօդի 180
ԿԱՆԱՅՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՈՒԱՆ ՏՕՆԱԿԱՐՈՒԹԻՒՆ
Կէօճճեան Շաքէ, Նորա, Զաւէն 6000
Մարգարեան Ալիս, Արթօ 8000
Տէրաշոտեան Մալար 500

Ս. ԱՍՏՈՒԱՄԱՄԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ԹՈՐՈՆԹՕ
Անի Թորմաճեան–Տամաթօ–ի մահուան առիթով
Սիրարփի Աթիքեան 200
Յակոբ եւ Արշօ Աթիքեան 100
Արթիւր եւ Վիգի Սէրգիս 50
Լիսա Արմոյեան 50
Ճորճ եւ Ալին Տօնապետեան–Թոտունեան 200
Պերճ եւ Դայի Աթիքեան 100
Այտա Աթիքեան եւ զաւակուրք 150
Ժան Զիշեան 300
Տէր եւ Տիկ. Լեւոն Տօնապետեան 50
Յարութ եւ Սեզա Գասապեան 50
Ազատ եւ Արմիկ Սաֆարեան 40
Մարի Տաբգաճեան 20
Արամ Համբարեան եւ ընտանիք 20
Արամ եւ Շաքէ Առաքլեան 50
Ժիլպէր եւ Բեննա Թարզի 100
Վաչէ եւ Թայլին Իսկէճեան 50
Ժանէթ Տայեան 100
Տիգրան եւ Սալբի Թօքաթլեան 100

Վազգէն եւ Լիւսի Թէրզեան 200
Թային Թէրզեան եւ ընտանիք 50
Յովիկ Մուշեան եւ ընտանիք 50
Վրէժ եւ Սօսի Թիթիզեան 100
Վերժին եւ Մէրիան Դաւիթեան 50
Յարութիւն եւ Ալիս Շիթիլեան 100
Եսթեր Սարգիսեան 25
Անդրանիկ Վարդանեան եւ ընտանիք 50
Երուանդ եւ Մարգրիտ Պօգօղլանեան 100
Գրիգոր եւ Նուարդ Գրիգորեան 25
Արթին եւ Սիլվա Յակոբեան 50
Պերճ Կարապետեան եւ ընտանիք 50
Ֆէրնանտ եւ Լենա Վարդանեան 100
Յարութ եւ Սիլվա Յակոբեան 50
Պերճ Կարապետեան եւ ընտանիք 50
Ֆէրնանտ եւ Լենա Վարդանեան 100
Յարութ եւ Թամար Մաթոսեան 100
Յասմիկ եւ Շուշիկ Պոյաճեաններ 50

Յովհաննէս եւ Անի Տէր Պետրոսեան 100
Տոքթ. Հրաչ եւ Քնար Գաւազանճեան 100
Սարգիս եւ Սեզա Պալեան 100
Աբրահամ եւ Օսիկ Մխաիարթիւեան 100
Լեւոն եւ Մարլէն Ֆէրմանեան 100
Գրիգոր եւ Արփի Շիթիլեան 100
Պէրի Փափազեան եւ ընտանիք 250
Նիզակ եւ Էլիզապէթ Տէր Յովա–կիմեան 100
Թադուհի Էմիրզեան 50
Արքի եւ Արփի Գասապեան 50
Արշօ, Արսա եւ Հայկ Զաքարեան–ներ 100
Ասպետ եւ Սօսի Աթիքեան 50
Արիս Պապիկեան 50
Լուսին Հատտատ 25
Էօժէնի եւ Քնար ՇէՀրեաններ 30
Ժան, Ալիս, Նարին եւ Ռաֆֆի Պապուշեան 50
Արա եւ Յասմիկ Պետրոսեան 30
Մանուէլ Աւ. Սարկաւազ ՇէՀիրեան 50
Տէր եւ Տիկ. Տանի Մարկորեան 100

Վահէ եւ Մանուշակա Յակոբեան 50
Աբրահամ եւ Մատլէն Աղամանուկեան 100
Զաքարեան Քոյրեր 40
Արեմազ Հէքիմեան 20
Մատլէնոս եւ Մարօ Տէրտէրեան 50
Անահիտ Օհանի մահուան առիթով
Գրիգոր Արթինեան եւ ընտանիք 20
Պետրոս Տուտակեան եւ ընտանիք 20
Սարմէն եւ Քասանտրա Ուաշերեան 100
Վարդան եւ Սոնիկ Տէր Օհաննէսեան 60
Տէր եւ Տիկ. Օհաննէս Թէլեան 50

Յարութ եւ Թամար Մաթոսեան 100
Սեւակ Հանէշեան եւ ընտանիք 50
Սերժ Շամահեան եւ ընտանիք 50
Նորա Պէտիրեան եւ ընտանիք 40
Միհրան եւ Ռուզան Արթինեան 20
Մատլէն Աթիքեան եւ ընտանիք 30
Վահէ եւ Միրնա Ծաղկունի 100
Միհրան եւ Արփի Ուաշերեան 100
Լեւոն եւ Մարալ Կոստանեան 30
Միհրան ճիզմէճեան 50
Շանթ եւ Ալին Ղազարեան 50
Նուպար Տէր Ներսէսեանի մահուան առիթով
Թամար եւ Դալար Ասատուրեան 85
Ճորճ եւ Սքմըր Տապպազեան 50
Canadian Chrome & Crank 80
Վրէժ եւ Սիրվարդ Սարգիսեան 50
Յակոբ եւ Արաքսի Գրիգորեան 100
Յովհաննէս եւ Ծովիկ Մարկարոսեան 60

Հրայր եւ Մակի Պօղոսեան 50
Ժան Հաժժար եւ ընտանիք 30
Մովսէս Ժամկոչեան եւ ընտանիք 25

Յակոբ եւ Նուէր Ֆիլօ 20
Ճորճ եւ Զապէլ Էքմէքճեան 50
Վահէ Թրփանճեան 50
Մելքոն եւ Սօսի Քարկոցեան 25
Մուրատ Հալլաճեան 20
Յակոբ Քէշքէշեան եւ ընտանիք 100
Յովհաննէս եւ Շաքէ Ֆէրմանեան 30
Վահէ եւ Ալիս Զաքարեան 50
Պետրոս եւ Զեյլա Պետրոսեան 50
Երուանդ եւ Մանուշակ Տապպաղեաններ 100
Յարութ Մարտիրոսեան 100
Ժազ եւ Փամէլա Սապունճի 200
Զարուհի Գասապեանի մահուան Ա. տարեկիցին
Յարութ եւ Սեզա Գասապեան 100

Տէր եւ Տիկ. Աբրահամ Սվաճեան 200
Տէր եւ Տիկ. Էտուարդ Սարաֆեան 200
Սարգիսեան Յակոբի Հոգւոյն
Զաւէն եւ Վարսենիկ Սարգիսեան 100
Վարուժ եւ Սոնա Սարգիսեան 100
Ժիլիէթ Սարգիսեան 100
Լեւոն եւ Մարլէն Ֆէրմանեան 50

Սոնա Զալիքեանի մահուան առիթով
Յարութիւն եւ Ալիս Շիթիլեան 100

Կիւէսլերեան Սեզրակի եւ Յակոբի Հոգիներուն
Մարինա Մահսէրճեան 20
Ավիաղեան Կարապետի եւ Սոկրատի Հոգիներուն
Լուսին Այվազեան 40

Մարտիրոսեան Հրանուշի 40–քին
Զոհրապ եւ Վեհանուշ Մարտիրոսեան 40
Վահէ եւ Քնար Մարտիրոսեան 50
Վարուժան եւ Քնար Նանտրեան 40

Միքայէլեան Լեւոնի Հոգւոյն
Վրէժ եւ Նուշիկ Միքայէլեան 50
Տէկիրճէնճեան Սեզա–ի 8–րդ տա–րեկիցին
Մանօ եւ Վարդի Տէր Յարութիւնեան 100
Ճօ եւ Անի Գազարեան 100
Պուտազեան Մարգրիտի, Աւետիսի, Գրիգորի, Ընծայի եւ Ժողէֆի Հոգիներուն
Տոքթ. Աւօ Պուտազեան 100
Յակոբ եւ Լուսին Պուտազեան 25

Էլիզ Պուտազեան 50
Վարդան եւ Զարուկ Պուտազեան 40
Տիկ. Արշօ Կոստանեան 20
Լեւոն եւ Մարալ Կոստանեան 30
Պաղտիկ եւ Նվինթի Պուտազեան 40
Շմբեան Անդրանիկի Ա. տարեկիցին
Տէր եւ Տիկ. Հրաչ Շմբեան 20
Գազանճեան Հերմինէ–ի եւ Ճապազչուրեան Վարդէլսի 40–քին
Վրէժ Մատոյեան 100

Պերճ եւ Յասմիկ Ուրըլաքեան 25
Յասմիկ եւ Շուշիկ Պոյաճեան 50
Շիրազ Պետրոսեան 20
Շաննազեան Յակոբի 40–քին եւ Համայն Շաննազեան զերդաստանի ննջեցեալներու Հոգիներուն
Պօղոս եւ Մարալ Շաննազեան 20
Քրիստափոր Գազանճեան 50
Ռաֆֆի եւ Նորա Սարգիսեան 40

Օհան եւ Թամար Օհաննէսեան 20
Մայք եւ Մարալ Գազանճեան 50
Մարի Տարազճեան 20
Զաքարեան Քոյրեր 20
Լուսին Հատտատ 20
Լուսարարեան Վաչէի մահուան Ա. տարեկիցին
Տիկ. Սօսիկ Լուսարարեան 50

www.yerkir.am



Այցելեցէք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կայքէջը՝
www.sourphagop.org



Innovation
that excites

THE BIG CLEARANCE

EVENT

AT NISSAN GABRIEL JEAN-TALON
&
NISSAN GABRIEL ANJOU

GROUPE NISSAN
GABRIEL



Up to
\$10,070
REBATE
ON THE 2016 ROGUE SL*

BEST CHOICE
TO
WHOEVER COMES FIRST

FROM APRIL 8TH TO 15TH


WE PAY THE TAX-EQUIVALENT*
ON ALL 2016 IN STOCK MODELS



Image for illustration purposes only.

**CLEARANCE OF THE
2016 ROGUE SL**
FULLY EQUIPPED

INITIAL PRICE	→	\$37,443
DISCOUNT FROM THE MANUFACTURER	→	\$5,250
TOTAL	→	\$32,193
EQUIVALENT ON TAXES	→	\$4,821
		FINAL PRICE
		\$32,193



NISSAN
GABRIEL
JEAN-TALON

3500, rue Jean-Talon O.
Montréal, QC H3R 2E8
514 509-7777
nissangabrieljeantalon.com
◀ OPEN SATURDAYS ▶

NISSAN
GABRIEL
ANJOU

7010, boul. Henri-Bourassa E.
Anjou, QC H1E 7K7
514 324-7777
nissangabrielanjou.com
◀ OPEN SATURDAYS ▶

*Conditions apply. Limited time offer and applies only on 2016 in stock models and are prone to any changes or cancelation without prior notice. We pay the tax-equivalent. Visit Nissan Gabriel Jean-Talon or Nissan Gabriel Anjou for more details.



BARRY KAREN GARO KAZANDJIAN



EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

ÉQUIPE KAZANDJIAN.com

CLASSÉS PARMİ LES MEILLEURS COURTİERS RE/MAX AU MONDE
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

KAZANDJIAN REALTY.com

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5